



## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

### ՀՀ-ի Ընտրական Հեղինակությունը՝ Հայաստանի 880 Հազար Աղքատները

Ժողովրդավարական հասարակարգերու մէջ գործող կուսակցութիւնները կը ներկայացնեն տուեալ երկրի ժողովրդային այս կամ այն շերտերու շահերը եւ ընտրութիւններու ընթացքին իրենց ձայները կ'ապահովեն ժողովուրդի այն խաւերէն, որոնց օգտակար դառնալու համար աշխատած են տարիներու ընթացքին:

Օրինակի համար, հոս Ամերիկայի մէջ Հանրապետականները ընդհանրապէս կը պաշտպանեն հարուստ դասակարգի շահերը, իսկ Դեմոկրատները ճանչցուած են որպէս միջին եւ աղքատ դասակարգի շահերու պաշտպան կուսակցութիւն: Երկուքն ալ իրենց քուէներու մեծ մասը կ'ստանան համապատասխանաբար այդ խաւերէն:

Հայաստանի մէջ քաղաքական այս հասկացութիւնները շրջուած են: Սերժ Սարգսեանի գլխավորած Հանրապետական կուսակցութիւնը իր ամբողջ ներուժը կ'օգտագործէ փոքրաթիւ մեծահարուստներու շահերը պաշտպանելու համար, սակայն ընտրութիւններու ընթացքին իր ստացած քուէներու մեծագոյն մասը կ'ապահովէ ժողովուրդի աղքատ դասէն՝ քսան տարիէ իշխանութիւնը պահելով իր ձեռքերուն մէջ:

Վերջին օրերուն հրապարակուեցան երկու զեկոյցներ, որոնք կու գան զիրար ամբողջացնելու: Ապրիլին տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւններուն վերաբերեալ Եւրոպացի դիտորդները հրապարակեցին իրենց վերջնական զեկոյցը, ուր կը յայտնուի թէ, ընտրութիւններու ընթացքին համատարած կաշառքի բաշխումը եկած է ստուերելու ընտրութիւններու արդիւնքները: Երկրորդ զեկոյցը կը վերաբերի աղքատութեան մակարդակին: Պաշտօնական տուեալներով Հայաստանի ժողովուրդի մէկ երրորդը՝ 880 հազար մարդ աղքատ է: Այս թիւը մօտ է քուէներու այն թիւին, որ ՀՀ-ն ստացաւ վերջին ընտրութիւններու ընթացքին:

Որդեգրուած ձեւը մէկն է: Նախ ժողովուրդը աղքատութեան մատնել, տարիներ շարունակ պահել այդ վիճակի մէջ եւ ապա ընտրութիւններու ընթացքին 10 հազարական դրամով (20 տոլար) գնել անոնց ձայները:

ՀՀ-ն գտած է միաժամանակ իշխանութիւնը պահելու գաղտնիքը՝ Հայաստանի 880 հազար աղքատները դարձնելով իր քուէներու գլխավոր շտեմարանը եւ ընտրութիւններուն ընտրութիւն՝ առանց մեծ դժուարութեան ապահովելով անոնց ձայները:

«ՄԱՍԻՍ»

### ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը կը Շեշտէ Հայաստանի Մէջ Ընտրական Գործընթացի Նկատմամբ Հանրային Վստահութեան Պակասը

ԵԱՀԿ Ժողովրդավարական Հաստատութիւններու ու Մարդու Իրաւունքներու Գրասենեակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) իր վերջնական զեկոյցին մէջ եկաւ յայտարարելու, որ ընտրակաշառքն ու ընտրողներու նկատմամբ ճնշումներու մասին վստահելի տեղեկութիւնները ստուերած են այս տարուայ խորհրդարանական ընտրութիւններու ընթացքը:

Ամփոփելով Ապրիլ 2-ին կայացած ընտրութիւնները՝ դիտորդական առաքելութիւն իրականացուցած կառույցը կողմէ հրապարակուած հաղորդագրութեան մէջ, մասնաւորապէս, ընդգծած է. - «Հակառակ դրական գնահատականի արժանացած օրէնսդրական բարեփոխումներուն եւ ընտրախախտումները նուազեցնելու նպատակով նոր թեխնոլոգիաներու կիրառման՝ ընտրակաշառքի, քաղաքային ծառայողներու եւ մասնաւոր ընկերութիւններու աշխատակիցներու նկատմամբ ճնշումներու մասին վստահելի տեղեկատուութիւնը ստուերած է ընտրութիւններու ընթացքը»:

Դիտորդական առաքելութեան վերջնական զեկոյցը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը ներկայացուցած է նաեւ քաղաքական ուժերուն ու քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչներուն:


Ընդդիմադիր «ԵԼԲ» դաշինքի պատգամաւոր Էտմոն Մարուքեանի խօսքով ԺՀՄԻԳ-ը արձանագրած է իրականութիւնը. - «Հիմնական փրօպէնները, որոնք եղել են եւ կան՝ ընտրակաշառքների մասսայական բաժանումից մինչեւ ընտրողներին վախեցնելու դէպքերը եւ հսկողին հսկելու դէպքերը, դրանք բոլորը, ըստ էութեան, արտացոլուած են զեկոյցում»:

### Պաշտօնական Տուեալներով Հայաստանի Մէջ 880 Հազար Մարդ Աղքատ է

2016 թուականին Հայաստանի մէջ աղքատութեան մակարդակը կազմած է 29.4%՝ 2008-ի 27.6%-ի դիմաց:

ՀՀ Ազգային վիճակագրական Ծառայութեան հրապարակած «Հայաստանի ընկերային պատկերը եւ աղքատութիւնը» զեկոյցի համաձայն՝ շատ աղքատներու տեսակարար կշիռը ամբողջ բնակչութեան մէջ կազմած է 9.8%՝ 2008-ին արձանագրուած 12.6%-ի դիմաց: Ծայրայեղ աղքատութեան մակարդակն ալ կազմած է 1.8%՝ 2008-ին արձանագրուած 1.6%-ի դիմաց:

Ըստ զեկոյցի, 2016 -ին ընդհանուր աղքատութեան մակարդակը աւելի բարձր էր 2008 թուականի մակարդակէն 1.8 տոկոսային կէտով (կամ 6.5% -ով), մինչդեռ ծայրայեղ աղքատութեան մակարդակը բարձրացած էր ընդամենը 0.2 տոկոսային կէտով: Միեւնոյն ժամանակ, տնտեսական ճգնաժամէն ետք աղքատներու թիւը նուազած է 2.9 տոկոսային կէտով՝ 2008-ի համեմատ:



Արձանագրելով Հայաստանի մէջ ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահութեան պակասը՝ ԺՀՄԻԳ-ը իշխանութիւններուն եւ քաղաքական կուսակցութիւններուն կողմէ քայլեր ձեռնարկել օրէնսդրական դաշտը բարեփոխելու, ընտրութիւններու արդարութեան նկատմամբ հասարակական վստահութիւնը ամրապնդելու, ինչպէս նաեւ հրապարակաւ ձայներու առքուվաճառքը դատապարտելու համար:

«Իրազեկ քաղաքացիներու միաւորում» հասարակական կազմակերպութեան փորձագէտ Սոնա Ղազարեան ըսած է որ, այս զեկոյցէն ետք իշխանութիւնները պէտք է հետեւութիւններ ընեն:

Ընդդիմադիր գործիչ Էտմոն Մարուքեան, սակայն, լաւատես է. «Կասեն՝ այո, թերութիւններ կան, օրէնքներ փոխենք, վերանայենք, փոփոխութիւններ անենք, «Ընտրական օրէնսգիրքը» նորից վերանայենք եւ այլն: Բայց դա ապստարտ է, որովհետեւ թղթային մակարդակում բան փոխել, իսկ իրական կեանքում հարիւր հազարաւոր մարդկանց 10,000 դրամներ բաժանել եւ վերարտադրուել՝ եւ այդտեղ հետեւութիւններ անելու տեղ չեն տեսնում իշխանութիւնների համար»:

### Էրտողան Դարձեալ Կը Մեղադրէ Հայկական Սփիւռքը

Թուրքիոյ նախագահ Էրտողան իր ղեկավարած «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութեան համագումարին իր ունեցած ելոյթի ժամանակ անդրադարձած է Հայաստանի հետ յարաբերութիւններուն՝ հերթական անգամ անոնք պայմանաւորելով հայկական սփիւռքի գործունակ:

Ինչպէս կը հաղորդէ «Արմէնփրես», վկայակոչելով թրքական «Հուրրիյէթ» թերթը, իր կուսակիցներուն առջեւ Էրտողան, անտեսելով այն հանգամանքը, որ թրքական կողմն է Հայաստանի հետ սահմանը փակ պահողը, յայտարարած է, թէ «սփիւռքի ազդեցութեան տակ Հայաստանը փակած է Թուրքիոյ հետ բարեկամական բոլոր ուղիները»:

Որպէս Հայաստանի հետ յարաբերութիւններուն հակակշիռ՝ ան օրինակ բերած է Վրաստանը, որ, ըստ Էրտողանի կարծիքի, կամուրջ կը ծառայէ Թուրքիոյ եւ Արեւմուտքի, ինչպէս նաեւ կովկասեան տարածաշրջանի ու Միջին Ասիոյ միջեւ:

«Այս երկու օրինակները շատ իմաստալից են: Մեզ հետ բարեկամութիւն ընողը կը շահի, իսկ «քէն քշողը» կը կորսնցնէ», - ըսած է Թուրքիոյ նախագահը:

### Թուրքիոյ մէջ Հետաքննութիւն Սկսած է Արցախ Այցելած Մտաւորականներուն Դէմ

Ատրպէյճան ալցելող Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլութ Չաւուշօղլու լրագրողներու հետ զրոյցի ընթացքին խօսած է այն չորս թուրք մտաւորականներուն մասին, որոնք Սեպտեմբերին ճանաչողական այցով մեկնած էին Արցախի Հանրապետութիւն:

Ատրպէյճանի դատախազութիւնը Արցախ այցելած Թուրքիոյ կանաչներու եւ ձախակողմեաններու կուսակցութեան հիմնադիր անդամ, «Անգարայի մտքի հարթակ» հասարակական կազմակերպութեան ղեկավար Ուֆուք Ուրասը, գրող, հրապարակախօս Սայիթ Չեթինօղլուն, լրագրողներ Ալի Պայրամօղլուն եւ Էրոլ Քաթըրը շրջապատը կալանաւորելու որոշում կայացուցած էր եւ անոնց դէմ յայտարարած է միջազգային հետախուզում:

Ըստ «Haberler» լրատուական կայքի, Չաւուշօղլու նշած է, որ Անգարան մտահոգուած է, որ վերոնշեալ անձիք առանց Ատրպէյճանի հետ հարաբերութիւններու կարգաւորման չեն կարողանալ հարաբերութիւններ կարգաւորել:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Հայաստանի Ձախողուած Շանքը. «Հագարամեակների Մարտահրավերները» Այս Անգամ Էլ Անբաւարար Գնահատեց

ԱՆԻ ՍԱՅԱԿԵԱՆ

Հայաստանը չի կարող մասնակցել 2018թ. ԱՄՆ «Հագարամեակների մարտահրավերներ կորպորացիայի» ծրագրին՝ անբաւարար ցուցանիշների պատճառով: Այս մասին Tert.am-ին տեղեկացրել են ՀՀ Միջազգային տնտեսական ինտեգրման եւ բարեփոխումների նախարարութիւնից՝ պատասխանելով հարցմանը: 2018 թուականի ՀՄԿ ծրագրերում ընդգրկուելու նպատակով թեկնածու երկրները պարտաւոր են ունենալ անցումային ցուցանիշներ Հագարամեակի Մարտահրավերներ ծրագրի (ՀՄԾ) կողմից սահմանած մի շարք բնագաւառներում: Ծրագրի շահառուները պարտաւոր են ներկայացնել իրենց ցուցանիշները 2017թ.-ի համար մէկ շնչին բաժին ընկնող եկամուտը հաշուարկուած է, որ պէտք է լինի մօտ 1945 տոլար, իսկ 1945 դոլարից մինչեւ 4035 տոլարի դէպքում տուեալ երկիրը համարուած է միջինից ցածր եկամուտ ունեցող երկիր, որի մէջ է մտնում նաեւ Հայաստանը, որտեղ ՀՆԱ-ի մէկ շնչին բաժին ընկնող նուազագոյն եկամտի չափը կազմում է շուրջ 3880 տոլար: Միեւնոյն ժամանակ հաշուի են առնուած ժողովրդավարական իրաւունքների, կորուստների եւ այլ ոլորտների ցուցանիշները:

Դեռեւս 2006թ. ԱՄՆ կառավարութեանն աւելցրելով Հագարամեակի մարտահրավեր կորպորացիան եւ ՀՀ կառավարութիւնը ստորագրեցին համաձայնագիր, որը

ընդգրկում էր հիւղատնտեսութեան ոլորտում կայուն տնտեսական աճի միջոցով նուազեցնել գիւղական աղքատութիւնը: Ծրագրի շահամեայ էր եւ պէտք է աւարտուէր 2011թ. Սեպտեմբերի 29-ին, ՀՄԿ այս դրամաշնորհի ներքոյ ՀՄՀ-Հայաստանի ծրագրի իրականացման համար կատարուած ներդրումը պէտք է կազմէին մօտ 236 միլիոն ԱՄՆ տոլար: Ծրագրի երկրի մայր ջրանցքների հիմնական հատուածների վերականգնման, մեծ կարեւորութեան պոմպակայանների արդիականացման, նոր ինքնահոս համակարգերի ձեւաւորման, ներտնտեսային ջրանցքների վերակառուցման ու Արարատեան դաշտավայրի դրեհատային համակարգի առանձին հատուածների վերականգնման էր միտուած Հայաստանի շուրջ 350 համայնքներում: Սակայն 2009 թուականին ծրագիրը կասեցուեց, կորպորացիայի հաղորդագրութեան համաձայն՝ տնօրէնների խորհրդի որոշման համար հիմք էր ծառայել այն հանգամանքը, որ Հայաստանի կառավարութեան կատարած քայլերը չեն համապատասխանում «Հագարամեակի մարտահրավեր» կորպորացիայի ժողովրդավարական կառավարման չափանիշներին: Կորպորացիայի գլխաւոր գործադիր տնօրէն Ռոզնի Բենտը նշել էր. «Այս որոշման պատասխանատուութիւնը կրում է ՀՀ կառավարութիւնը, որի գործողութիւնները չեն համապատասխանել ծրագրի շարունակական մասնակցութեան համար անհրաժեշտ ցուցիչներին: Հանգամանքը, որ կորպորացիան

չի կարողանալու համագործակցել Հայաստանի հետ գիւղական աղքատ համայնքների համար նախատեսուող ճանապարհների կառուցման գործում, յատկապէս հիասթափեցնող է, քանի որ հենց գիւղական այդ համայնքներն են ապագայում զարգացում ապահովելու»: Սակայն իրականում մարտեան դէպքերը պատճառ դարձան, որպէսզի Հայաստանին զրկեն այս աջակցութիւնից: 2008թ. Մայիսի կէսերին Հայաստանում յետադարձական շրջանում առաջացած իրավիճակը եւ դրանից բխող խնդիրները քննարկուել էին ԱՄՆ-ի Պետքեպարտամենտի Եւրոպայի եւ Եւրասիայի երկրներին ԱՄՆ-ի աջակցութեան համակարգող թոմ Ադամսի հետ Սերժ Սարգսեանի կայացած հանդիպմանը: Ադամսն ասել էր, որ որոշակի մտահոգութիւններ ունեն՝ կապուած ծրագրի հիմքում ընկած չափորոշիչների պահպանման հետ, իսկ Սերժ Սարգսեանը նշել էր. «Մեր ցանկութիւնն է շարունակել գործակցութիւնը «Հագարամեակի մարտահրավերներ» հիմնադրամի հետ»: Նախորդ հնգամեայ ծրագրի աւարտից յետոյ, մասնաւորապէս, վերջին երկու տարիներին Հայաստանը կրկին յայտ է ներկայացնում այդ ծրագրին մասնակցելու համար: Ուշագրաւ է, որ եթէ վերջին 2-3 տարում Հայաստանի Հանրապետութիւնը բաւարարել է չափանիշներին, բայց խորհրդի կողմից առաջնահերթ չի համարուել, ապա այս տարի այն ընդհանրապէս չի բաւարարում: Պատահական գերատեսչութիւնը որոշ ցուցանիշներով անբաւարար լինելը բա-

ցատրում է ոչ թէ յետընթացով, այլ թեկնածու երկրների աւելի արագ աճով, որի հետեւանքով Հայաստանը յայտնուել է աւելի ցածր դիրքում, իսկ որոշ ցուցանիշներով ցածր լինելն էլ, ըստ նախարարութեան, պայմանաւորուած է աղճատուած վիճակագրութեամբ:

«Օրինակ՝ «քաղաքական իրաւունքներ» բաժնում հաշուի առնուած չեն վերջին ընտրութիւնների արդիւնքները, իսկ «հիմնական կրթութեան համակարգում ներդրումներ» բաժնում Հայաստանի ցուցանիշը 0 է, ինչն ակնյայտ սխալ է»: Հետաքրքիր է, թէ ինչ էր ակնկալուած կառավարութիւնը վերջին ընտրութիւնները գնահատելիս: Յիշեցնենք, որ ապրիլեան ընտրութիւնների վերաբերեալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի վերջնական գեկոյցում արձանագրուած էր. «Ընտրակաշառքի, քաղձառայողների վրայ գործադրուած ճնշումների, այդ թւում՝ դպրոցներում եւ հիւանդանոցներում, ինչպէս նաեւ որոշ կուսակցութիւնների օգտին ձայն կորզելու նպատակով ընտրողների ահաբեկման մասին պնդումները մթազնել են Ապրիլի 2-ին Հայաստանում անցկացուած ԱԺ ընտրութիւնների ընթացքը»: Այնպէս որ, ամէն ինչ այնքան էլ մաքուր ու արդար չի եղել, որի մասին վստահեցնում են ՀՀ իշխանութեան ներկայացուցիչները: Այս համատեքստում հետաքրքրական է, թէ Հայաստանը ինչպէս է իրականացնելու ՀՀ-ԵՄ շրջանակային համաձայնագրով ստանձնած պարտաւորութիւնները, մասնաւորապէս, կոռուպցիայի վերացման, ժողովրդավարութեան հաստատման եւ այլնի առումով, երբ դրա համար նույնիսկ նախադրեալներ չկան:

«ՀԱՅԵԼԻ»

Էրդողանը՝ Հայաստանին. Սպառնալիք, Թէ՞ Համագործակցութեան Ակնարկ

ՍԱՐԳԻՍ ԱՐԾՐՈՒՆԻ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանն իր դեկավարած «Արդարութիւն եւ զարգացում» (AKP) կուսակցութեան համաժողովում անդրադարձել է Հայաստանի դէմ շրջափակմանը: Էրդողանը յայտարարել է, թէ հայկական սփիւռքի ճնշման տակ Երեւանը յամառօրէն փակ է պահում Թուրքիայի հետ բարեկամութեան դռները, որի հետեւանքով դուրս է մնացել էներգետիկ, առեւտրային ու տրանսպորտային նախագծերից: «Եւ շարունակելու է դուրս մնալ», - ասել է Էրդողանը: Անշուշտ, ճիշտ չի լինի պնդել, որ Հայաստանի եւ Սփիւռքի օրակարգերը նոյնն են կամ, որ գոյութիւն ունի ձեւակերպուած համահայկական օրակարգ, որն ընդհանրական է Հայաստանի ու Սփիւռքի համար: Ինքը՝ Սփիւռքը, մէկ միասնական համակարգ չէ՝ ոչ քաղաքական դիրքորոշումների եւ ոչ էլ արժէքային կողմնորոշումների, մտածողութեան առումով: Ասել կ'ուզենք, որ տեղին չէ խօսել նոյնիսկ Սփիւռքի միասնական դիրքորոշման մասին, նոյնիսկ՝ Թուրքական հարցում: Փաստ է նաեւ, որ հայկական սփիւռքը հիմնականում բացասական է արձանագրութիւններին, որովհետեւ Սփիւռքը, դժբախտաբար, շատ դէպքերում կոնսուլիդացում է հա-

կաթուրքականութեան իռացիոնալ հիմքով: Ի դէպ, հենց այստեղ էլ դրսեւորուած է էրդողանի խօսքի սնանկութիւնը եւ Սերժ Սարգսեանի քաղաքական ռացիոնալութիւնը: Սարգսեանը յստակ գիտակցում էր, որ հայ-թուրքական արձանագրութիւնները, մեղմ ասած, դրական չեն ընդունուած գաղթօճախներում, սակայն ոչ միայն անձամբ շրջազայեց համայնքներում՝ յաճախ քննադատութիւններ ի տարափի տակ ներկայացնելով իր դիրքորոշումը, այլ նաեւ հայ-թուրքական յարաբերութիւններում տուրք չտուեց ճնշիչներին, պատմութեան ինքնիշխան, տասնամեակներով ձեւաւորուած կարծրատիպերին: Սերժ Սարգսեանը կարողացավ յաղթահարել Սփիւռքի դիմադրութիւնը, հայ-թուրքական հաշտեցման գործընթացում ընդգծել Հայաստանի սուբիեկտութիւնը: Մի բան, որ այդպէս էլ չյաջողուեց էրդողանին, որովհետեւ արձանագրութիւնների ոգուն հակադրուող Անկարայի նախապայմանները, նաեւ Հայաստանը մեկուսացնելու շանտաժը, ըստ էութեան, Պաքուի օրակարգն են: Առնուազն ակնյայտ է, որ հայ-թուրքական հաշտեցումը կենսականօրէն ձեւաւորուել էր Անկարային, որովհետեւ լեգիտիմացնում էր նրա

տարածաշրջանային ազդեցութիւնը՝ յատկապէս ռուս-վրացական հակադրութեան ֆոնին: Ժամանակը ցուց տուեց, որ էրդողանը չի կարողանում ձեռք բերել ատրպէյճանական գործօնից: Միւս կողմից՝ հիմա իրավիճակն արմատապէս փոխուած է, որովհետեւ, օրինակ, վերջերս Փութինը դիւանագիտօրէն էրդողանին հասկացրել է, որ ատրպէյճանական թեման չիցկի ռուս-թուրքական օրակարգ: Ի դէպ, գուցէ էրդողանի երեկուայ արտայայտութիւնը ոչ թէ շանտաժ է, այլ իւրօրինակ մեսիջ Սերժ Սարգսեանին, որ եթէ հայկական լոբբիստական կազմակերպութիւնները միջազգային հարթակներում «չըջափակեն» Թուրքիային, ապա Անկարան պատրաստ է մտածել Հայաստանի ապաշրջափակման մասին: Միայն այն հանգամանքը, որ հայկական հարցը շարունակում է մնալ էրդողանի գերազանցած օրակարգում՝ յուշում է, որ Անկարայում հայ-թուրքական յարաբերութիւնների էջը փակուած չեն համարում եւ նման յայտարարութիւններով փորձում են հասկանալ Հայաստանի հարաւոր արձագանքը: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

www.massispost.com

ՄԱՍԻՍ  
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ՊԱՇՏՏԱԹԵՐԹ  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՅԷ ԱՏԱՊԱՅԵԱՆ  
MASSIS Weekly  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid at Pasadena CA.  
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՀՀ խորհրդարանը Մերժած է ԵՏՄ-ԷՆ Դուրս Գալու Մասին «Ելք» Դաշինքի Նախագիծը

ՀՀ խորհրդարանը մերժած է քառօրեայ նիստի օրակարգին մէջ ղրուած Եւրասիական Տնտեսական Միութեանն ղուրս գալու մասին «Ելք» դաշինքի յայտարարութեան նախագիծը: Ազգային ժողովի 76 պատգամաւորներ ղէմ քուէարկած են, միայն 6-ը՝ կողմ:

ՀՀ-ական պատգամաւոր Սամուէլ Ֆարմանեան նշած է. «ԵՏՄ-ԵՄ քննարկումների հետ կապուած պէտք է արձանագրել հետեւեալը՝ ՀՀ-ին յաջողուել է գրեթէ ոսկերչական ճշգրտութեամբ արտաքին քաղաքականութեան ոլորտում առաջ տանել ՀՀ շահերը: ԵՏՄ-ԵՄ արհեստական հակադրութիւնը չի բխում Հայաստանի շահերից եւ վստահ եմ, որ մեզինք ձախ նստած խմբակցութիւնը եւս դա լաւ գիտակցում է»:

«Ելք» խմբակցութեան պատգամաւոր Էտմոն Մարուքեան իր հերթին անդրադարձնալով Ֆարմանեանի ելոյթին ըսած է. «Հակադրութիւն եղել է մեր հանրապետական գործընկերների ներկայացրած փաստարկների մէջ: Ես ձեզ առաջարկում եմ մարզեր այցելել եւ մարզական բացատրել, թէ ինչու են ապրանքներն այսքան թանկանում եւ Յունուարի 1-ից

ինչու են թանկանալու: Մարզկանց բացատրէք, որ Հայաստանը զարգանում է, բացատրէք, որ ապրանքները չեն թանկանում»:

Անոր խօսքով, այս տարիներու ընթացքին չկայ մէկ ուսումնասիրութիւն, որ կը խօսի այն մասին, որ ԵՏՄ-ն օգուտ է Հայաստանին: «Դրա համար էլ տեղի ունեցան ահասարտութիւններ, ու ահաբեկման ֆոնին էլ քննարկուեմ էր մեր նախագիծը: Ձեր կողմից հակառուսական տրամադրութիւններ են Հայաստանում տարածուել, վստահ եմ, որ ՌԴ ձեր գործընկերները հիասթափուած են ձեզանից, որ այդքան հակառուսականութիւն էք տարածում մեր ժողովրդի մէջ»:

Մարուքեան նշած է նաեւ, որ ՌԴ-ի ու իշխանութեան ներկայացուցիչներուն համար Հայաստանը չի դիտարկուել որպէս զարգացող Հայաստան, ՌԴ դաշնակից Հայաստան:

ՀՀ խմբակցութեանն էր միայն Նաղտալեանն ալ նշած է. «Այն եզրահանգումները, որ արուեմ են, թէ թանկացումները կապուած են ԵՏՄ-ի հետ, չկայ որեւէ տնտեսական հիմնարկում դրա վերաբերեալ, որ ներդրումները դրա համար են նուազել»:

Այս Տարի Բանակին Մէջ Մահացած է 56 Զինուորական Ծառայող

2017-ի յունուար-սեպտեմբեր ամիսներու ընթացքին ՀՀ զինուած ուժերու եւ ԼՂ պաշտպանութեան բանակի մէջ մահացած է 46 զինծառայող: 46 զինծառայողներէն 29-ը ժամկէտային զինծառայողներ են, 17-ը՝ պայմանագրային:

Արձանագրուած մահուան դէպքերէն 17-ը տեղի ունեցած է ՀՀ-ի, 29-ը՝ ԼՂ-ի մէջ: Իսկ եթէ այս 46 դէպքին գումարուին նաեւ հոկտեմբեր եւ նոյեմբեր ամիսներու գոհերը, ապա դէպքերու քանակը կը հասնէ 56-ի շեմը:

Բանակի խնդիրներով զբա-

ղուող «Զինուոր» համակարգող խորհուրդի նախագահ Մարկարիթա Սաջատեանի կարծիքով 56 դէպքը շատ է, բայց պատերազմական վիճակի մէջ գտնուող երկրի համար հասկնալի է:

«Ցաւում եմ, որ 11 ամսուայ մէջ 56 կորուստ ունենք, բայց քանի Ղարաբաղի խնդիրը չի լուծուել, մենք կ'ունենանք նոր կորուստներ: Ես վախի զգացողութիւն ունեմ, որ գնալով գոհերի թիւը կ'աճի», - «Ժամանակ»-ի հետ զրոյցի ժամանակ ըսած է տիկին Սաջատեանը:

Ինչու Պաշտօնանկ Եղալ Հայկազ Բաղմանեանը

Պաշտպանութեան նախարար Վրգէն Մարգարեան անդրադարձած է ԶՈՒ գլխաւոր շտաբի պետի տեղակալ Հայկազ Բաղմանեանին աշխատանքին ազատելու հարցին:

«Նրա ազատման պատճառը աշխատանքային մի շարք պարտականութիւնների չկատարումն ու թերացումն է», ըսած է Վրգէն Մարգարեան, աւելցնելով, որ Բաղմանեանը աշխատանքին ազատման գեղուցազիր գրած է իր յորդորով:

«Յորդորի պատճառը աշխատանքային պայմանաւորութիւնների չկատարումն է, որը անհամատեղելի է յետագայ համատեղ ծառայութեան հետ», ըսած է ան:

Էտուարտ Նալպանտեան Նախագահական Ընտրութիւններու Ամենահաւանական Թեկնածուն

«Ժամանակ» օրաթերթը կը գրէ. «Յաջորդ տարուայ մարտին Հայաստանի մէջ կայանալիք նախագահական ընտրութիւններու ամենահաւանական թեկնածուն կրնայ դառնալ արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպանտեանը: Չնայած Նալպանտեանի համար նախանշուած էր, որ ան գոնէ մինչեւ յաջորդ տարուայ աշուն պէտք է զբաղեցնէ Հայաստանի ԱԳ նախարարի պաշտօնը եւ այդ կարգավիճակին մէջ կայանակերպէ Ֆրանսախօս երկիրներու գազաթնափողովը, սակայն Նալպանտեանի համար աւելի մեծ պատիւ կ'ըլլայ, եթէ Ֆրանսախօս երկիրներու գազաթնափողովի հիւրերուն ընդունի նախագահի պաշտօնով»:

«Ուրեմն Դու ՌՎ Ես Դարձել, Որ Մէկ Տարուայ Մէջ Չորս Խուկն Բեզ Փորձել Է Տապալել» Մանուչարեանը՝ Մերժ Սարգսեանին

«Ես այդտեղ, բացի խայտառակութիւնից, ուրիշ ոչինչ չեմ տեսնում», - անդրադառնալով Նորքի գինուած խումբի գործին՝ «Առաջին Լրատուական»-ի հետ զրոյցի ընթացքին ըսած է «Ղարաբաղ» կոմիտէի անդամ Աշոտ Մանուչարեանը:

Դատական վերջին նիստին հրապարակուեցաւ Արթուր Վարդանեանի եւ Վահան Շիրիխանեանի զրոյցի ձայնագրութիւնը, ուր կը յիշատակուի պաշտպանութեան նախկին նախարար Սէյրան Օհանեանի անունը եւ ըստ հոլթեան անոր առնչութիւնը խումբի գործողութիւններուն:

Աշոտ Մանուչարեան անդրադառնալով Օհանեանի հարաւոր կապին ըսած է. «Ինչո՞ւ միայն Սէյրան Օհանեանին, թող այդ նոյն գործով նոյն միկրոֆոնը կապէին այդ աղջնակի պոչից, Արթուր Վարդանեանին էլ հետը դնէին՝ թող մօտենային ՀՀ ցանկացած կառավարողին ու այնպէս անէին, որ մարդն ազնիւ խօսէր: Բոլորը կ'ասէին, որ Սերժը կործանում է երկիրը: Եւ ամենակարեւորը՝ ցանկացածին դիմես հարցնես՝ ո՞նց անենք, որ Հայաստանում ինչ-որ բան փոխուի, կասի՝ կրակելով, ու կը տայ հենց առաջին ղէմքերի անունը»:

Մանուչարեան աւելցուցած է. «Գործի մասնակիցներից շատ շա-



«Ղարաբաղ» կոմիտէի անդամ Աշոտ Մանուչարեան

տերին ճանաչում եմ՝ Շիրիխանեան, Գառնիկ Մարգարեան, Խաչիկ Աւետիսեան, Վոլոդեա Առաքելեան՝ բոլորը երկիրն նուիրուած մարդիկ են: Ես վերցնում եմ վատթարագոյն՝ իրօք այդ բոլոր մարդիկ ուզել են Սերժ Սարգսեանին տապալեն, այդ դէպքում պէտք է դատարանը պատասխանի հարցին՝ ինչո՞ւ: Ասենք թէ Սամուէլ Բաբանեանի, Ժիրայր Սեֆիրեանի, «Սասնա ծռերի», Նորքի խումբը փորձել են քեզ տապալել, ուրեմն դու ով ես դարձել, ի՞նչ կեանք ես վարել, որ չորս խումբ քեզ փորձել է տապալել: Նրանց գործողութիւնը կոչուած է գործողութիւն ծայրաստիճան անհրաժեշտութեան պարագայում:

Վահագն Խաչատրեան

«Եթէ Կառավարութիւնը Կանխատեսում Է 4,5 Տոկոսի Աճ, Ինչո՞ւ Չի Բարձրացնում Թոշակներն Ու Աշխատավարձը»

Հայաստանի կառավարութիւնը 2018 թուականի համար 4,5 տոկոսի տնտեսական աճ նախատեսելով յոյսը դրած է մի քանի հանգամանքի վրայ: Այս մասին, NEWS.am-ի թղթակցի հետ հարցազրոյցի ընթացքին ըսած է Երեւանի նախկին քաղաքապետ, տնտեսագէտ, ՀԱԿ անդամ Վահագն Խաչատրեանը:

«Նախ դրսի գործօններն են՝ կապուած այն ապրանքների կամ հումքի հետ, որոնք արտահանուած են, երկրորդ գործօնը Ռուսաստանն է, որտեղ մինչեւ 2 տոկոս տնտեսական աճ է նախատեսուում, որն իր հերթին պայմանաւորուած է համաշխարհային շուկայում նաւթի գներին կայունացումը մակարդակով: Երրորդն իհարկէ տրանսֆերներն է, որոնք էլի շարունակուած են դեռեւս աճել. այս տարի 10-15 տոկոսի աճ կը լինի: Այս ամէնը ըստ կանխատեսումների, եկող տարուայ տնտեսական աճի հիմքեր է տալիս», - ըսած է ան:

Այդուհանդերձ, Վահագն Խաչատրեանի կարծիքով, այդ գործօնները բաւարար չեն տնտեսական աճ ապահովելու համար. «Ներքին ռեսուրսների օգտագործման անհրաժեշտութիւն կայ: Ես նկատի ունեմ մեր տնտեսութեան արդիւնաւէտութեան բարձրացում, աշխատանքի արտադրողականութեան բարձրացում, նոր աշխատատեղեր, որոնց վերաբերեալ ես լաւատես չեմ: Բայց մի ուրիշ խնդիր է



Երեւանի նախկին քաղաքապետ, տնտեսագէտ Վահագն Խաչատրեան

առաջանում, եթէ նոյնիսկ այդ ամէնն իրականութիւն դառնայ, ուղղակի էր դէպքում կառավարութիւնն ինչո՞ւ չի կանխատեսում աշխատավարձերի բարձրացում, կենսաթոշակների բարձրացում, սոցիալական նպաստների բարձրացում: Քանի որ եթէ իրականութիւն դառնայ գնաճի 4,5 տոկոս ցուցանիշը, կամ 4 տոկոսը, կամ նոյնիսկ 3 տոկոսը, մեր քաղաքացիների եկամուտների նուազում կը լինի, քանի որ աշխատավարձի կամ կենսաթոշակի աւելացում չկայ: Հակասութիւնը սա է, որի պատասխանը ցաւօք սրտի կառավարութիւնը մինչեւ օրս չի տալիս», - շեշտած տնտեսագէտ Վահագն Խաչատրեան:

# ԼՈՒՐԵՐ

## Հայաստանը Մինչեւ 176 Միլիոն Եւրոյի Աջակցութիւն Պիտի Ստանայ ԵՄ-Էն

Հայաստան-Եւրոմիութիւն նոր ստորագրուած համաձայնագրի առաջնային նպատակը տնտեսական եւ առեւտրային հարցերու մէջ Հայաստան-Եւրոմիութիւն առեւտրային յարաբերութիւններու բարելաւումն է: Այդ մասին «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ ըսած է Տնտեսական զարգացման եւ ներդրումներու փոխնախարար Գարեգին Մելքոնեանը:

«Հիմնական առաջնային ուղղուածութիւնը, դա այն յարաբերութիւններն են, որոնք վերաբերում են ԵՄ-ՀՀ առեւտրին, դրանց դիւրացմանը եւ մեր հետաքրքրութիւնների հիմնական ուղղութիւնը, քննարկուած հարցերի թիրախը եղել է նա, որպէսզի մեր տնտեսաբար ուղղութիւնները հարկաւորութիւնները դէպքի Եւրոպական միութիւն ունենայ աւելի հասանելի, տեսանելի, կանխատեսելի իրաւական կարգաւորումների փաթեթ», - ըսած է փոխնախարարը:

Մելքոնեանի խօսքով՝ համաձայնագիրը նաեւ շատ կարեւոր է ներդրումային համագործակցու-

թեան տեսանկիւնէ:

Իսկ հարցին, թէ համաձայնագրով Եւրոմիութեան ինչ ծաւալի աջակցութեան մասին է խօսքը, Մելքոնեան պատասխանած է. - «Թուն համաձայնագիրը, որպէս այդպիսին, գումարի ծաւալ չի նախատեսում, եւ համաձայնագրով գումարային թիւ չէք տեսնի, այն պարզ պատճառով, որ Եւրոպական միութիւնը նմանատիպ փրանսաւորում իրականացնում է տարբեր գործիքներով: Տուեալ պարագայում մենք քննարկում ենք եւ գրեթէ վերջնական համաձայնեցման փուլում ենք արդէն գտնուում Միասնական աջակցութեան շրջանակ կոչուող փաստաթղթի շուրջ, որը որ 2017-2020 թուականների համար Հայաստանի աջակցութեան ընդհանուր ծաւալը, որ վերաբերում է երկկողմ պայմանաւորուածութիւնների փաթեթին, 144-ից 176 միլիոն եւրոյի սահմաններում է: Յատուկ ընդգծեմ, որ այստեղ որեւէ վարկային միջոց չկայ»:

## Ալիեւ. Ղարաբաղի Հարցի Մէջ «Սթաթուս Քոն» Պէտք Է Փոխուի

Լեւոնային Ղարաբաղի հարցին մէջ «սթաթուս Քոն» պէտք է փոխուի, եւ հակամարտութիւնը պէտք է կարգաւորուի ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի բանաձեւերու ծիրէն ներս, յայտարարած է Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը՝ ելոյթ ունենալով Պաքուի մէջ ընթացող «Ասիայի սիրտը - Իթանպուրէան գործընթաց» համաժողովին:

«Ատրպէյճանի տարածքի մէկ հինգերորդը գրաւուած է: Մեր բնակավայրերը, մզկիթները աւերուած են: «Սթաթուս Քոն» պէտք է փոխուի, ինչը բազմիցս ընդգծած են ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահները: Ղարաբաղեան հակամարտութիւնը պէտք է կարգաւորուի ՄԱԿ-ի Անվտանգութեան

խորհուրդի բանաձեւերու ծիրէն ներս», - ըսած է Ատրպէյճանի նախագահը:

Ղարաբաղեան հակամարտութեան հարցը Նոյեմբերի Պաքուի մէջ քննարկած են նաեւ Ատրպէյճանի եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարները: «Ասիայի սիրտը - Իթանպուրէան գործընթաց» համաժողովին մասնակցելու նպատակով Ատրպէյճանի մայրաքաղաք ժամանած թրքական դիւանագիտական գերատեսչութեան ղեկավար Մելուրթ Չաւուշօղլուն յայտարարած է, թէ Թուրքիան քայլեր պիտի ձեռնարկէ զարաբաղեան խնդրի կարգաւորման եւ «Ատրպէյճանի գրաւուած տարածքները ազատագրելու» համար:

## Թրքական Օդանաւային Ընկերութիւնը Կը Նախատեսէ Թռիչքներ Իրականացնել Հայաստան

«Թրքական օդանաւային ընկերութեան» (THY) գլխաւոր տնօրէն Իլքեր Ալճըն յայտարարած է օդանաւային ընկերութեան նոր ուղղութիւններու նախագիծերուն մասին:

Թրքական «Airlinehaber» կայքի փոխանցմամբ, THY-ի ղեկավարը շեշտած է, թէ կը նախատեսեն թռիչքներ իրականացնել Հայաստան: «Դէպի Հայաստան Թուրք-Խալէն միայն «Atlasglobal»ը թռիչքներ կ'իրականացնէ: Կը նախատեսենք մենք ալ թռչիլ Հայաստան», -

ըսած է ան:

Նշենք, որ այս տարի Յունիսէն սկսեալ, դէպի Հայաստան պէտք է թռչէր թրքական «ըուքոսթըր» «Պեկասուս» օդանաւային ընկերութիւնը, սակայն անհասկնալի պատճառներով այն չեղարկուած է:

Իսկ 2013 թուականի ապրիլին «Նարեկավանք Թուրք» կազմակերպած էր Երեւան-Վան ուղիով թռիչք, սակայն վերջին պահին այդ ալ անհասկնալի պատճառներով չեղարկուած էր:

## Թուրքիոյ մէջ Հետաքննութիւն Սկսած Է

Շարունակուած էջ 1-էն

ճանի թոյլտուութիւնը ունենալու եւ առացն տեղեակ պահելու թրքական իշխանութիւնները, մեկնած են Արցախ:

«Անօրինական կերպով ատրպէյճանական տարածք մուտք գործելը յանցանք է, - նշած է Չաւուշօղլուն: Մանաւանդ եթէ հաշուի առնենք, թէ որքան զգալուն հարց է զարաբաղեան հիմնախնդիրը: Երբ դեռ յարակից չ'ըջաններն ալ գրաւման մէջ են: Ահա թէ ինչու

մենք եւս հետաքննութիւն սկսած ենք, երբ Ատրպէյճանի մէջ հետաքննութիւն սկսաւ Ղարաբաղ մեկնած նշեալ անձերու նկատմամբ: Անոնք արդէն հրաւիրուած են դատարան՝ ցուցմունքներ տալու: Այդ մարդիկ նոյնիսկ զանգահարած են ինձի եւ ըսած, որ չեն գիտակցած, թէ յանցանք կը գործեն: Ես ալ ըսի, որ ատոր համար պիտի բացատրուի ինչն տալ ատրպէյճանական իշխանութիւններուն: Ի վերջոյ, տարրական դպրոցի աշակերտներ չեն: Անոնք թէեւ նշած են,

## Արցախ Այցի Ընթացքին Սերժ Սարգսեանին Ցոյց Տուած Են Նոր Գաղտնի Զէնքը



Նախագահներ՝ Սերժ Սարգսեան, Բակո Սահակեան եւ ԳԳ պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեան կը հետեւին Գործընթացային խումբի կիրառման

Հայկական երկու հանրապետութիւններու ռազմական համագործակցութեան եւ գործողութիւններու համադրման բազմակողմ ծրագրի ծիրէն ներս, 1-էն 4 Դեկտեմբեր օրերուն Պաշտպանութեան Բանակ այցելած է Սերժ Սարգսեանի գլխաւորած պատուիրակութիւնը: Աշխատանքային այցի ընթացքին նախագահները եղած են նաեւ ռազմական նշանակութիւն ունեցած շարք մը կառույցներ եւ ծանօթացած հակառակորդին առաւել արդիւնաւէտօրէն հակադէյլու նպատակով ստեղծուած եւ ՊԲ-ի մէջ ներդրուած շարք մը՝ բացառապէս եւ հանրապետական ոչ ենթակայ նորամուծութիւններու, խրախուսել նշուած եւ յարա-

կից գործընթացներու մէջ աչքի ինկած եւ առաւելագոյն ներդրում ունեցած զինծառայողները:

Անոնք մասնաւորապէս այցելած են «Ասպարէզ» ռաւտմանական կեդրոն, ուր անոնց ներկայացուցած են հայկական արտադրութեան նոր գինքերու տեսակները, որմէ ետք աշտարակէն հետեւած են անոնց կիրառման ընթացքին:

Աշխատանքային այցի ընթացքին, հայկական երկու հանրապետութիւններու ռազմաքաղաքական ղեկավարութեան կողմէ յարգանքի տուրք մատուցուած է նաեւ խորհրդային միութեան կրկնակի հերոս, մարշալ Յովհաննէս Բաղդամեանի յիշատակին, որու 120-ամեակը լրացաւ Դեկտեմբերի 2-ին:

## Նալպանտեան Ընդունած Է ՍԾՏԶԿ Գլխաւոր Քարտուղարը

Սեւեռովեան տնտեսական համագործակցութեան կազմակերպութեան Խորհրդարանական վեհաժողովի (ՍՄՏԶԿ ԽՎ) ծիրէն ներս կազմակերպութեան կանոնադրութեան եւ սկզբունքներուն հակառակ գործելու որոշ փորձեր վնասակար են եւ հարուած կը հասցնեն կառույցի հեղինակութեան: Այս մասին յայտարարած է Հայաստանի արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպանտեանը՝ երէկ ընդունելով ՍՄՏԶԿ գլխաւոր քարտուղար Մայքլ Քրիսթիտիսը:

Նալպանտեանը նշած է, որ Հայաստանը կը կարեւորէ տարածաշրջանային տնտեսական ընդլուծման գործընթացները եւ այդ սկզբունքով առաջնորդուելով, աշխոյժօրէն կը մասնակցի ՍՄՏԶԿ շրջանակէն ներս ընթացող բազմաոլորտ համագործակցութեան:

Քրիսթիտիսը գոհունակութիւն յայտնած է ՍՄՏԶԿ շրջանակէն ներս Հայաստանի աշխոյժ ներգրաւուածութեան կապակցութեամբ:

Արտաքին գործոց նախարարութեան մամլոյ եւ տեղեկատուութեան վարչութեան փոխանցմամբ՝ զրուցակիցները անդրադարձած են Սեւեռովեան տնտեսական համագործակցութեան կազ-

մակերպութեան ներս Հայաստանի յառաջիկայ նախագահութեան եւ անոր առաջնահերթութիւններուն, քննարկած են ՍՄՏԶԿ ծիրէն ներս փոխգործակցութեան առաջնային ուղղութիւնները, կազմակերպութեան բարեփոխումներուն առնչուող հարցեր:

Յիշեցնենք, նախորդ շաբաթ Քրիսթի մէջ իրականացուած ՍՄՏԶԿ ԽՎ լիազումար նիստի ժամանակ Հայաստանի պատուիրակութիւնը լքած էր դահլիճը՝ պարզելով, որ իր բացակայութեամբ քննարկման արդիւնքով «հռչակագրի մէջ տարածաշրջանի մէջ առկա հակամարտութիւններու վերաբերեալ փոփոխութիւն մը մտցուած է, որ ամբողջովին կը հակասէ միջազգային իրաւունքի՝ ուժի եւ ուժի սպառնալիքի չ'իրաւման, տարածքային ամբողջականութեան եւ ժողովուրդներու ազատ ինքնորոշման իրաւունքի սկզբունքներուն»:

«Մենք այդ գործելաճոճը զնահատուած ենք իբրեւ կառույցի աւանդույթների եւ հույսերու ոտնահարում: Նման աշխատանքն անընդունելի եւ դատապարտելի է ցանկացած խորհրդարանական վեհաժողովի համար», - յայտարարած էր ՍՄՏԶԿ-ի մէջ Հայաստանի պատուիրակութիւնը:

որ մեկնելով Ղարաբաղ, այստեղ պաշտպանած են Ատրպէյճանը:

«Այնուամենայնիւ արդէն իրաւական գործընթացը սկսած է: Թող ատրկա դաս ըլլայ, որպէսզի յետագային ոչ մէկը առանց թոյլ-

տուութեան այցելէ Ղարաբաղ, որ կը հանդիսանայ Ատրպէյճանի տարածք: Ատրկա անընդունելի է թէ մեզի համար եւ թէ Ատրպէյճանի», - եզրափակած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարարը:

### Ռուսական Յեռուստատեսութեամբ Կը Քննարկեն Հայաստանի ու Եւրոմիութեան Միջեւ Համաձայնագիրը



Ռուսական ՆՏՎ հեռուստատեսութեան 28 Նոյեմբերի «Հանդիպման վայրը» հաղորդումը նուիրուած էր Հայաստանի ու Եւրոմիութեան միջեւ Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագրի ստորագրման: Հարկ է նշել, որ թէ հաղորդավարները, թէ բանախօսները ողջ հանդիպման ընթացքին փաստաթուղթը անուանած են ստոյգացման համաձայնագիր:

Հայագրի փորձագէտ Գէորգ Միրզայեան նշած է, որ Հայաստանը տնտեսութեան, անվտանգութեան ոլորտին մէջ ամբողջութեամբ կախուած է Ռուսաստանէն եւ այդպիսի կախուածութիւնը լարուածութիւն կ'առաջացնէ: Այդ ֆոնին Հայաստանի մէջ հոգեբանական բացասական մթնոլորտ կը ստեղծուի: Անդրադառնալով հարցին, թէ ինչու Եւրոպային պէտք է այդ համաձայնագիրը, ան նշած է, որ Եւրոպան կ'ուզէ ամբողջ յետխորհրդային տարածքը քաշել Ռուսաստանէն:

Քաղաքագէտ Օլեկ Պարապանովի խօսքով, Հայաստանը Եւրոպային ընդհանրապէս պէտք չէ: «Նպատակն է սեպ խրել Եւրասիական միութեան մէջ: Եւրոպան հասկնալի է, մեզի միշտ վատութիւն ըրած է ու պիտի ընէ, հարցը Հայաստանին պէտք է տալ», - ըսած է ան: Ան նշած է, որ Հայաստանը թրոյական ձի պիտի դառնայ Եւրասիական միութեան մէջ: «Երբ Հայաստանը մտաւ ԵՏՄ, Հայաստանի նախագահը մեկնեց Չինաստան եւ ըսաւ՝ կրնաք ձեր ապրանքները Հայաստանով բերել ԵՏՄ», - ըսած է Պարապանով:

Քաղաքագէտ Սերկէյ Մարքովի խօսքով, Եւրոմիութիւնը կ'ուզէ ոչնչացնել ԵՏՄ-ն: Անոր կարծիքով, այս փաստաթուղթը կը վատ-

թարացնէ Հայաստանի եւ Ռուսաստանի յարաբերութիւնները: Ըստ Մարքովի՝ Հայաստանը պահանջներ ունի Ռուսաստանին, Ռուսաստանէն աւելի շատ փող կ'ուզէ: «Մենք բախում ունինք Նժդէհի հարցով: Ան Ատոլֆի Հիթլերի գինակիցն էր, որուն յուշարձաններ կը կանգնեցուին այնտեղ եւ անոր ազգային հերոս կը կոչեն», - ըսած է Մարքով՝ Հայաստանին մեղադրելով Ռուսաստանի ներքին գործերուն միջամտելու փորձերու մէջ, որ «Ռուսական հեռուստատեսութիւնները չըսեն, որ Նժդէհը նացիստական յանցագործ է»: Մարքով նշած է, որ Հայաստան-ԵՄ փաստաթուղթի ստորագրումը Ռուսաստանի պարտութիւնն է, Ռուսաստանի վրայ յարձակման նախապատրաստութիւն:

Հաղորդման ժամանակ հաղորդավարը նշած է, որ Եւրոմիութիւնը Հայաստանի վրայ մշտապէս ճնշում կը գործադրէ, պահանջելով գործերը դուրս բերել Ղարաբաղէն: Անոր խօսքով, Հայաստանը պահանջած է, որ Արեւելեան գործընկերութեան գազաթնափողովի ամփոփիչ հռչակագրին մէջ ընդգծուի ազգերու ինքնորոշման սկզբունքը, սակայն այդ մէկը չէ եղած, այլ միայն տարածքային ամբողջականութիւնը նշուած է:

Հաղորդման շարք մը մասնակիցներ տգեղ համեմատութիւններ ըրած են, Ռուսաստանը՝ ամուսինի, իսկ Հայաստանը՝ կնոջ դերի մէջ դիտել տալով, որ ամուսինէն զարդեր եւ այլ նուէրներ կը պահանջէ, իսկ Եւրոմիութիւնն ալ երիտասարդ սիրեկանն է:

Հաղորդման ընթացքին Հայաստանին նուիրուած հատուածը աւարտելով՝ հաղորդավարը նշած է, որ կ'անցնին Ռուսաստանի միւս «ման եկող կնոջ»՝ Պելաուսին:

### Ֆրանսայի Նախագահ Էմանուէլ Մաքրոնը Պիտի Այցելէ Հայաստան



Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն պիտի այցելէ Հայաստան: ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումներու նախարար Սուրէն Կարայեանի հետ հանդիպման ժամանակ Հայաստանի մէջ Ֆրանսայի դեսպան Ժոնաթան Լաքրոն նշած է, որ հայ ֆրանսական յարաբերութիւններու, ինչպէս՝ տնտեսական համագործակցութեան խթանման համար հակառակ նշանակութիւն ունին ստորագրուած Հայաստան-Եւրոմիութիւն Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագիրը եւ Հայաստանի կողմէ Ֆրանսոֆոնիոյ նախարարներու խորհուրդի նախագահութեան ստանձնումը: Դեսպանը այս ծիրէն ներս կարեւոր համարած է նաեւ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի սպասուող այցը Հայաստան:

Նախարարութեան հասարակայնութեան հետ կապերու վարչութեան հաղորդմամբ, Ժոնաթան

Լաքրոն խօսքով՝ Հայաստանի մէջ ներկայացուած ֆրանսական գործարարութիւնը ընդլայնուելու մտադրութիւն ունի: Դեսպանը աւելցուցած է, որ արդէն իսկ հասցուցած է հանդիպիլ որոշ ներդրողներու հետ, եւ կրնայ փաստել, որ ֆրանսացիները կը ցանկան ներդրում կատարել Հայաստանի մէջ՝ հաշուի առնելով նաեւ Հայաստանի արտահանման հնարաւորութիւնները դէպի եւրոպական, եւրասիական եւ իրանական շուկաներ:

«Մենք պատրաստ ենք ըլլալ Հայաստանի մէջ գործող ֆրանսական գործարարութեան կողքին, աջակցիլ անոր եւ բոլոր ջանքերը ուղղել այնպիսի միջավայրի եւ պայմաններու ապահովման, որոնք անհրաժեշտ են ֆրանսացի գործարարներուն Հայաստանի մէջ գործունէութիւն իրականացնելու համար», ... նշած է նախարար Կարայեան:

### Պաշտօնական Ստեփանակերտ. Թուրքիոյ Ներգրաւումը Բանակցութիւններուն Անհնարին է Եւ Անթոյլատրելի

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մելլուք Չաուշօղլուն, 29 նոյեմբերին, յայտարարած է, որ Անգարայի մէջ հանդիպած է ԵԱՀԿ Մինսկի խումբի անդամներու եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնակազմի անդամներու հետ: Ան յայտարարեց, որ ԵԱՀԿ Մինսկի խումբի անդամներու եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնակազմի անդամներու հետ կապերու վարչութեան հաղորդմամբ, Ժոնաթան



Անդրադառնալով այդ հանդիպման Արցախի նախագահի մամուլի խօսնակ Դաւիթ Բաբայեան յայտնած է, որ, առհասարակ, պէտք է խոստովանիլ մէկ բան՝ Թուրքիան մշտապէս ներգրաւում է ատրպէյճանա-դարբաղեան հակամարտութեան գործընթացին մէջ:

«Այդ ներգրաւումութիւնը բացասական է, եւ ասիկա բոլորի համար ակնյայտ է: Թուրքիոյ քաղաքականութիւնը բաց է բաց ուղղուած է հայոց պետականութեան դէմ, որ կը դրսեւորուի ո՛չ միայն Ատրպէյճանին սատարելով, գայն յարձակման դրդելով եւ հովանաւորելով գինք, այլ նաեւ Հայոց Յեղափոխութեան Ժխտումով, անոր ճանաչման պահանջին դէմ հակահակական տարբեր ծրա-

գիրներ իրականացնելով», - ըսած է Դ. Բաբայեան եւ նշած, որ այսպիսի հանդիպումներով, ի հարկէ, չի նշանակեր, որ Թուրքիան պաշտօնապէս պէտք է դառնայ հակամարտութեան կարգաւորման միջնորդներէն մէկը, որ անհնար է եւ պարզապէս անթոյլատրելի:

Դ. Բաբայեան ընդգծած է, որ վերջին շրջանին թրքական կողմի աշխուժութիւնը դարբաղեան հիմնախնդրի գործին մէջ ակնյայտ է, եւ այդպիսի հանդիպումներու ժամանակ ԵԱՀԿ Մինսկի համաձայնագրի հաւանաբար Թուրքիոյ կը հասկցնեն, որպէսզի ան չհատէ «կարմիր գիծ»-ը:

**OFFICE SPACE FOR RENT  
IN PASADENA**  
**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**  
1060 North Allen Ave  
Pasadena, CA 91104  
Գրասենեակները վերանորոգուած  
եւ յարմար վարձքերով  
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
(626) 398-0506

### ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՓԱՌԱՊԱՆԾ 130-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ

«Նոյնն է մեր ուղին այսօր եւ ընդմիշտ»: Հայկական իրականութեան քաղաքական առաջին կուսակցութեան՝ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան հիմնադրութեան 130-ամեակի փառապանծ նշումը տեղի ունեցաւ երէկ երեկոյեան, Սին էլ Ֆիլի քաղաքապետարանի սրահին մէջ: Հանդիսութեան ներկայ գտնուեցան Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Շահէ եպս. Փանոսեան, Տանն Կիլիկիոյ կաթողիկէ հայոց Պէյրուսի պատրիարքական թեմի օգնական եպիսկոպոս Գէորգ Ասատուրեան, ՄԱՀԱԵՄի փոխնախագահ, Հայկազեան համալսարանի նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտոս թեման, Պէյրուսի մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Սամուէլ Մկրտչեան, կանանց հարցերու պետական նախարար Ժան Օղասապեան, ՍԴՀԿ Կեդրոնական վարչութեան անդամներ ընկ. Ալեքսան Բէօշկէրեան եւ ընկ. Նարեկ Գալստեան, ՍԴՀԿ



հանգրուանները, Հնչակեան հերոսներու գործունէութիւնը եւ կուսակցութեան արձանագրած յաջողութիւնները:

Հանդիսութեան բացման խօսքը կատարեց ՍԴՀԿ Տխրունի Ուսանողական Երիտասարդական Միութեան ատենապետ ընկ. Անդրանիկ Սալպաշեան, որմէ ետք «1887 Թուին» երգով հանդէս եկաւ լիբանանահայ երիտասարդ երգիչ ընկ. Յովիկ Թաֆրանեան:

ՍԴՀԿ Լիբանանի շրջանի վարիչ Մարմինի ատենապետ, պետական երեսփոխան ընկ. Սեպուհ Գալփաքեան իր խօսքին մէջ նշեց, որ հոյլ մը ուսանողներու կողմէ հիմնադրուած կուսակցութիւնը 130 տարի է ի վեր կը

մնայ պատնէշի վրայ՝ յանուն հայ ժողովուրդի շահերու պաշտպանութեան: Ընկ. Գալփաքեան նշեց, որ Հնչակեան կուսակցութիւնը դարձած է պատմական փարոս մը, որ լոյս սփռեց եւ յոյս ներշնչեց հայ



Լիբանանի շրջանի վարիչ Մարմինի ատենապետ, պետական երեսփոխան ընկ. Սեպուհ Գալփաքեան, պետական երեսփոխան Շանթ Չինչինեան, ՌԱԿ Լիբանանի Շրջանային վարչութեան ատենապետ Տոքթ. Աւետիս Տազեան, ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի անդամ Վիգէն Աւագեան, Լիբանանի Կեդրոնական դրամատան նախկին փոխկառավարիչ Յարութիւն Սամուէլեան, Պէյրուսի քաղաքապետութեան անդամ, ՀԿԲՄի ատենապետ Արամ Մալեան, Սին էլ Ֆիլի քաղաքապետի ներկայացուցիչ Աւետիս Երեմեան, ՍԴՀԿի մասնաճիւղէ ըլլալով պատասխանատու ընկերներ, միութիւններու ղեկավարներ եւ ներկայացուցիչներ, հնչակեան կուսակցականներ եւ լիբանանահայերու բազմութիւն մը:

Լիբանանի, Հայաստանի եւ Հնչակեան կուսակցութեան քայքայներու յոտնկայս ունկնդրութենէն ետք տեղի ունեցաւ «Դարերու Ուղեկիցը» խորագրեալ տեսագրութեան ցուցադրութիւն, որուն մէջ ներկայացուցաւ Հնչակեան կուսակցութեան անցած 130ամեայ ուղին, անոր բոլորած

ժողովուրդին, անոր մութ եւ անյոյս օրերուն, իսկ այժմ վերածուած է յաջեանակի փարոսի: Անոր համաձայն, Հնչակեան կուսակցութիւնը տէրը կը կանգնի հայրենիքը պաշտպանելու եւ հնչակեան հերոսներուն ուխտը կատարելու իր յանձնառութեան:

Ընկ. Գալփաքեան իր խօսքին մէջ անդրադարձաւ Միջին Արեւելքի զարգացումներուն ընդհանրապէս եւ լիբանանեան նորագոյն անցուկարձերուն մասնաւորապէս: Դժուար որակելով տարածաշրջանի կացութիւնը, ընկ. Գալփաքեան կոչ ուղղեց ըլլալու զգօն: Ան զօրակցութիւն յայտնեց Լիբանանի անկախութեան եւ գերիշխանութեան, կարեւորելով պետական հաստատութիւններու առողջ աշխատանքը: Ընկ. Գալփաքեան դրուատեց Հանրապետութեան նախագահին եւ վարչապետին ջանքերը՝ պահպանելու Լիբանանի կայունութիւնը եւ երկիրը հեռու

Շար.ը էջ 16

### ՀԱԼԷՊԻ ՄԵՋ ՄԵԾ ՇՈՒՔՈՎ ՆՇՈՒԵՑԱԻ Ս.Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 130-ԱՄԵԱԿԸ



Հալէպի մէջ հանդիսաւոր կերպով նշուած է Ս.Դ.Հ.Կ.ի 130ամեակը: Միջոցառումներու մեկնարկը սկսած է Կիրակի, 26 Նոյեմբերի առաւօտեան, Հալէպի Ազգային գերեզմանատան մէջ տեղադրուած 20 կախաղաններու յուշակոթողի այցելութեամբ, ուր յարգանքի տուրք մատուցուած եւ ծաղկեպսակներ զետեղուած են կուսակցութեան եւ անոր ենթակայ բոլոր միութիւններուն անունով:

Այնուհետեւ, կէսօրէ ետք, Հալէպի «Գէորգ Եսայեան» սրահէն ներս տեղի ունեցած է Ս.Դ.Հ.Կ.ի 130ամեակի պաշտօնական արարողութիւնը, որուն ներկայ գտնուած են երեսփոխան Ժիրայր Ռէյխսեանը, ՀՅԴԻ եւ ՌԱԿի ներկայացուցիչները, միւս կազմակերպութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչները:

Հակառակ տիրող վիճակին եւ մեծ թիւով Հալէպահայերու երկրէն բացակայութեան 700 հոգի պարփակող սրահը ամբողջութեամբ լեցուն եղած է: Կուսակցութեան խօսքը կարգացած է Տխրունի Ուսանողական



Երիտասարդական Միութեան անդամ Սիրան Զգուշեանը: Ան իր խօսքին մէջ ժողովուրդին յիշեցուցած է կուսակցութեան նպատակները, որոնք ինչպէս անցեալին, այսօր եւ ապագային ալ կը մնան նոյնը: Ընդգծելով այն միտքը, որ Սուրիոյ, մասնաւորապէս Հալէպի մէջ պատերազմի դժուար տարիներուն կուսակցութիւնը միշտ մնաց պատնէշի վրայ եւ իր բոլոր կարելի միջոցներով ու կառուցներով Կիլիկեան վարժարանով, Նոր Սերունդ Մշակութային Միութեամբ, ՀՄՄով, փորձեց օգնութեան ձեռք երկարել վիրաւոր սուրիահայութեան:

Արարեքէն բացման խօսքը կատարած է «Տխրունի»ի վարչական անդամներէն Գօգօ Աղայեան:

Այնուհետեւ, սահիկներու միջոցաւ ներկայացուած է ՍԴՀԿ.-ի ամփոփ պատմութիւնը ներկայացնող 20 վայրկեաննոց տեսանիւթ մը, որուն

Շար.ը էջ 16

# ՄԵԾԱՐԱՆՔԻ ՇՔԵՂ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՄԲ ՆՇՈՒԵՑԱԲ ԱՌԱՋՆՈՐԴ ՅՈՎՆԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 60-ԱՄԵԱԿԸ



Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմը արժանավայել կերպով նշեց իր բարեջան առաջնորդ Գերշ. Տէր Յովնան Արք. Տէրտէրեանի ծննդեան 60-ամեակը:

Արդարեւ առաջնորդարանի հովանիին ներքեւ գործող մատակարար յանձնախումբի կողմէ կազմակերպուած սոյն ճաշկերոյթ-հանդիսութիւնը տեղի ունեցաւ Դեկտեմբերի 1ին 2017, Ուրբաթ երեկոյեան Հոլիվուտի Տաղլեան մշակութային կեդրոնին մէջ: Շքեղ սրահը լեցուն էր ոչ միայն արեւմտեան թեմի տարբեր կառույցներու ներկայացուցիչներով, այլեւ պաշտօնական այլ հիւրերով: Ներկաներուն մէջ կը նշմարուէին ԱՄՆի Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան, Ռումանիոյ Հայոց Առաջնորդ Տաթև Եպս. Յակոբեան, Դամասկոսի Թեմի առաջնորդ Արմաշ Եպս. Նալպանտեան, Արեւմտեան Թեմի նախկին առաջնորդ Վաչէ Արք. Յովսէփեան, Լոս Անճելոսի Հայաստանի հիւպատոս Վալերի Մկրտումեան, ինչպէս նաեւ ԱՄՆի տարբեր նահանգներէն, Արժանթինէն, Քանադայէն ժամանած հիւրեր եւ թեմէն ներս ծառայող աւելի քան 30 հոգեւորականներ:

ԱՄՆի եւ Հայաստանի քայլերգներու յոսնակայ ունկնդրութենէն ետք սեղաններու օրհնութիւնը կատարեց արժ. Տ. Մանուկ Քհնյ. Մարգարեան:

Տօնական ընթրիքի պահուն գործադրուեցաւ պատշաճ երաժշտական յայտագիր, ընկերակցութեամբ կրէկ Հօշարեանի նուագախումբին եւ երգիչներուն:

Այս առթիւ պատրաստուած էր ինամուծ յայտագիր մը զոր ձեռնհասօրէն վարեցին օրուան հանդիսավարներ՝ Տէրիք Ղուկասեանն ու Սիլվա Խաչիկեանը, որոնք 60 ամեակի նախաձեռնարկ մատակարար մարմնի (steworship) անունով սրտաբուխ ջերմ խօսքերով ողջունեցին բազմահարիւր ներկաները:

Յուզադրուեցաւ Յովնան Սրբազանի կեանքի տարբեր ոլորտները ներկայացնող տեսաերիզ մը: 60 ամեակի յիշարժան տարեդարձին առթիւ ընթերցուեցաւ Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի օրհնութեան գիրը, զոր կարդաց յատկապէս էջմիածինէն ժամանած լուսարարապետ Գերշ. Յովնան Եպս. Յակոբեան: Շնորհաւորական հուշակագիրներ ղրկած էին գոնկրէսական

Ատամ Շիֆ եւ Պրատ Շէրման, սենաթի անդամ՝ Անթօնի Փորթանթինօ, Լոս Անճելոսի քաղաքապետ՝ Էրիք Կարսէթի եւ Պըրպէնքի քաղաքապետ՝ Ուիլ Ռաճըրգ:

Առաջնորդ Յովնան Սրբազանի 60 ամեակին առթիւ շնորհաւորական եւ արեւշատութեան ջերմ

Առաջին անգամ խորհրդային Հայաստանում պարտադրուած երկարատեւ լուսթիւնից յետոյ պետական մակարդակով ցեղասպանութեան զոհերի յիշատակի օրը ոգեկոչուել է 1965 թուականին՝ Մեծ եղեռնի 50-ամեայ տարելիցին: Ոգեկոչման միջոցառումների եւ յուշահամալիրի կառուցման գլխաւոր նախաձեռնողներից էր ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Յակով Զարոբեանը (1908-1980): Դառնալով ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար (1960թ.)՝ հայրենասէր պետական գործիչը, ոչ միայն տնտեսական բարձր ցուցանիշներ է ապահովում, այլեւ կուսակցական գաղափարաքաղաքական շղթաները զանց առնելով, սկսում է իր ժամանակի համար անհնարին թուացող համագաղափար ծրագրերի իրագործումը՝ Սփիւռքի հետ կապերի ամրապնդում, Մեծ եղեռնի 50-ամեայ տարելիցի միջոցառումների կազմակերպում, Մեծ եղեռնի զոհերի յուշահամալիրի կառուցում եւ այլն:

Դեռեւս 1964թ. նա հանդիպումներ եւ քննարկումներ ունեցածով ԽՍՀՄ բարձրաստիճան պաշտոնյաների՝ հայտնեաց Մ. Սուսլովի, Ա. Գրոմիկոյի, Ն. Պոստոլոու, ՆաեւՆ. Խրուշչովի, Լ. Բրեժնեւի հետ՝ փորձելով նրանցից անձամբ ստանալ իր ծրագրերի իրագործման թույլտուութիւնը:

1964թ. Դեկտեմբերի 13-ին Յա. Զարոբեանը ԽՍՀՄ Կենտկոմին ուղարկած «1915 թուականին հայերի զանգուածային բնաջնջման 50-ամեակի հետ կապուած միջոցառումների մասին» նամակում նշում է, որ հայերի զանգուածային կոտորածը, տեղահանութիւնը «Թուրքիայի կառավարող հանցախմբի կողմից խոշոր մաշտաբներով ցեղասպանութեան մարդատայց քաղաքականութեան իրականացումն էր»:

Գիտակցելով ԽՍՀՄ բարիդրացիական յարաբերութիւնները Թուրքիայի հետ՝ Յա. Զարոբեանը ձեւափոխում է յուշամալիւրի ան-



Յայոց ցեղասպանութեան զոհերի յուշահամալիրի պաշտոնական բացումը, 29 Նոյեմբերի, 1967թ. ԳԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը Երեւանի Կիրովի անօսան քիմիական կոմբինատի հնոցից բերուած ջահով վառում է յաւերժական կրակը: Նրա հետեւում (ձախից աջ) կանգնած են ԳՍՄՄ միմիստրների խորհրդի առաջին տեղակալ Սուրեն Սովետյանը, ԳԿԿ Երեւանի քաղկոմի առաջին քարտուղար Կարէն Դեմիրճյանը, ԳՍՄՄ Գերագոյն խորհրդի նախագահութեան նախագահ Նազուշ Յարութիւնյանը, անուանի բանաստեղծներ Պարոյր Սեւակը, Սիլվա Կապուտիկեանը եւ այլք: (ԳՅԹԻ հաւաքածու)

վանումը, այն ներկայացնելով Առաջին համաշխարհային պատերազմում զոհուած հայ նահատակներին նուիրուած կոթող (այդ կերպ դիւրացուեց Մոսկուայի՝ յուշահամալիրի կառուցման համար տրուող թույլտուութիւնը): Մինչդեռ 1965 թ. Մարտի 16-ի ՀԽՍՀ Նախարարների խորհրդի կարգադրութեան մէջ յուշարձանը կոչուեց է «1915 թուականի եղեռնի զոհերի յիշատակը յաւերժացնող կոթող»:

1966 թ. Փետրուարի 5-ին Զարոբեանը ազատուեց ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնից՝ այլ աշխատանքի անցնելու կապակցութեամբ:

Յա. Զարոբեանի կողմից իրականացուող համահայկական միջոցառումները մեծապէս խթանեցին Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ դատապարտման գործընթացի ծաւալմանը:

**1915 ԹՈՒԱԿԱՆԻ ՄԵԾ ԵՂԵՈՆԻ ԶՈՒՇԵՐԻ ՅՈՒՇԱՐԱՄԱԼԻՐԸ**  
Հիմք ընդունելով 1965 թ. Մարտի 16-ի ՀԽՍՀ Նախարարների խորհրդի կարգադրութիւնը՝ թերթերում հրատարակուեցին Մեծ եղեռնի զոհերի յիշատակը յաւերժացնող կոթողի կառուցման հանրապետական մրցույթի ծրագիրն ու պայմանները: Յուշարձանը պէտք է ոգեկոչէր Ցեղասպանութեան զոհերի յիշատակը եւ միեւնոյն ժամանակ խորհրդանշէր հայ ժողովրդի վերածնունդը, նրա ներկան եւ պայ-

լատկացուեց 776.800 ուրբլի, իսկ կապալաուու կազմակերպութիւն ընտրուեց «Երբեմնի» տրեստը (կառավարիչ՝ Պետրոս Թումանեան, շինվարչութեան պետ Արշաւիր Մինասեան, տեղամասի պետ Արտիուշա Օրդուխանեան):

Ճարտարապետների կողմից ընտրուեց յուշարձանի կառուցման եռատարր յօրինուածքի սկզբունքը: Դրա համաձայն՝ դէպի յաւերժութեան կրակը խոնարհուած 12 բազալտէ սրբատաշ մոյթերը, կազմելով կոնաձեւբաց ծաւալով կառուց, խորհրդանշում են Մեծ եղեռնի զոհերի դամբարանը: Դէպի երկինք խոյացող յուշասիւնը՝ հայ ժողովրդի վերածննդի խորհրդանիշն է: Կառուցն ամբողջացնում է յուշապատը, որի հակառակ կողմում 1996 թուականից ամփոփուած են Հայոց ցեղասպանութեան դէմ բողոքի ձայն բարձրացրած հասարակական-քաղաքական գործիչների եւ մտաւորականների շիրմներից բերուած հողով սափորները: Յուշապատի վրայ 2002թ.



Յուշարձանի շինարարութեան ընթացքը

ծառ ապագան. սա մրցույթի գլխաւոր պահանջն էր:

Մրցույթին ներկայացուեց 78 նախագիծ: 12 հոգուց բաղկացած հեղինակաւոր յանձնաժողովը (նախագահ՝ Գ. Աղաբաբեան) ընտրեց «ՀԽՍՀ դրօշ» ծածկապատկերով նախագիծը (ճարտարապետներ՝ Ա. Թարխանեան, Ս. Քալաշեան): Յուշարձանի շինարարութեան համար

փորագրուեցին Օսմանեան կայսրութեան հայաբնակ առաւել խոշոր բնակավայրերի անուանումները:

Յուշարձանի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ 1967 թ. Նոյեմբերի 29-ին, բայց ոչ ամբողջական աւարտուն տեսքով՝ առանց

Շար.ը էջ 18

LIFE INSURANCE    INDIVIDUAL & GROUP HEALTH INSURANCE    LONG TERM CARE    MEDICARE    DENTAL & VISION    DISABILITY



**M MARONIAN**  
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

Call us today!

**(818) 500 9585**  
**(818) 269 0909**

**Bedros & Siamanto**  
805 EAST BROADWAY, GLENDALE, CA 91205

CA Insurance Lic. #0494056 / #0C99815  
MARONIANINSURANCE.COM

# ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԶՈՅԳ ԳՐՔԵՐ ԴԻԼԱՆՉԻ ԴԻԼԱՆՉԵԱՆԻ ԳՐՉՈՎ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Վերջի մի քանի տարիներում յաջորդաբար պատմական գրքեր են լույս տեսել Իրանի հայաբնակ գաղառների մասին, արդարեւ գնահատելի աշխատանք: Այդ գաղառներում այլեւս հայեր չեն ապրում, վաղուց նրանք հայաթափ են եղել՝ հայրենադարձութեան, թեհրանում հաստատուելու եւ ապա արեւմտեան երկրներ մեկնած լինելու պատճառով: Գիւղերում տեղաւորուել են այլք օգտագործելով հայ գիւղացու կառուցած տունն ու այգին, արտն ու դաշտը...: Տարիների թաւալումով այդ գաղառներում պատկերը այլ է այժմ Իրանի յեղափոխութիւնից յետոյ: Այդ գաղառների մի շարք գիւղերում պահպանուել են գերեզմանաքարեր, իսկ որոշ եկեղեցիներ առնուել են Իրանի



մեծագիր էջերով բովանդակալից գրքեր հեղինակութեամբ՝ Դիլանչի թեմրագի Դիլանչեանի (Դիլանչի՝ ճարտարախօս, ճարտարալեզու),

առաջինը՝ «Դիլանչեաններ, տոհմագրութիւն եւ բարեկամութիւն», երկրորդը՝ «Փերիահայոց Ազգագրութիւնից»: Այս գրքերը թերթելիս նկատեցի հեղինակի կատարած հսկայական աշխատասիրութիւնը, սրանք պատմագիտութեան յանձնուելիք գրքեր են մոռացութիւնից փրկելու մի նահապետական գերդաստանի սերունդների շառաւիղը մանրամասնութիւններով եւ փերիոյ գաղառի առանձնակի գիւղերի մասին: Գաղառին առնչող երկրորդ հատորը տպագրութեան ընթացքի մէջ է եղել, երբ ցաւօք հեղինակը միայն առաջին գիրքը տեսնելուց յետոյ հոգին աւանդում է: Նախքան մահը արդէն իսկ երկրորդ եւ երրորդ գրքերի նիւթերը պատրաստ յանձնել էր տպագրութեան: Ողորմած հոգին պատմագրութեան կատարած արժանի ծառայութեան համար ընդմիշտ յիշուելու եւ յիշատակուելու է իր արժէքաւոր պատմական գրքերով:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Առաջին երկու գրքերը հրատարակուել են Աւստրալիայի Սիդնիում հովանաւորութեամբ եւ մեկենասութեամբ Հերոս Դիլանչեանի, իսկ խմբագրումը, ձեւաւորումը եւ համակարգչային էջադրումը կատարուել է Աննա Աշոտի Չոքեքչեանի միջոցով: Երրորդ գիրքը տպագրութեան ընթացքի մէջ է:

Հեղինակը՝ խօսք ընթերցողիս «Դիլանչեաններ, տոհմագրութիւն եւ բարեկամութիւն» գրքում գրում է՝ «Ես միշտ ցանկութիւն եմ ունեցել իմանալ, թէ ինչպիսին է եղել Իրանի փերիա գաղառում ապրող հայերի կեանքն ու գործունէութիւնը, այս նպատակն իրականացնելու համար ինձ պէտք էին ճշգրիտ ու հիմնաւոր փաստեր ներկայացնելու գաղառի Ղարղուն գիւղում ապրող մի հնաւանդ տոհմի պատմութիւնը, քանի որ ես ինքս էլ այդ տոհմի մի օղակն եմ... Ժանօթ ու տեղեակ պատմութեանը»: Նա շնորհակալութիւն է յայտնում

Շար.ը էջ 19



մշակութային ժառանգութեան հսկողութեան ներքոյ: Գրքերը գրուել են տոհմի, ապրած գիւղի կամ գաղառի անցեալի պատմութեան՝ Շահ Աբբասեան բռնագողթին յաջորդող շուրջ չորս դարերի կեանքի մասին, որպէսզի վառ պահուի պապերի յիշատակը յետագայ սերունդների սրտերում, անցեալի յիշատակումն ու պահպանումը վառ օրինակ է սերնդաշարունակութեան: Ըստ մեր տեղեկութեան ընթերցողի սեղանին



է դրուել՝ Բուրվարու, Ղարաղանի, Սուլթանաբազի (Քեազազի) եւ Քեամարա գաղառների մասին գրքեր, որոնք արդիւնքն են հետազոտութիւնների եւ պրպտումների շնորհիւ ձեռք բերուած տեղեկութիւնների եւ փաստերի հիման վրայ:

Վերջին օրերին յղուածագրիս յանձնուեց Մասիս Դիլանչեանի միջոցով երկու ծաւալաշատ

**THE ARARAT ESKIJIAN MUSEUM**  
AND  
**THE NATIONAL ASSOCIATION FOR ARMENIAN STUDIES**  
AND RESEARCH (NAASR)

Present

**THE SINS OF THE FATHERS:**  
*Turkish Denialism and the Armenian Genocide*  
by  
**Siobhan Nash-Marshall**  
*Mary T. Clark Chair of Christian Philosophy,*  
*Manhattanville College*

**Sunday, December 10, 2017, 4:00 p.m.**  
**Ararat-Eskijian Museum-Sheen Chapel**  
**15105 Mission Hills Road, Mission Hills, CA**

In 1915 the government of the Ottoman Empire began systematically to rip Western Armenians off the lands where their ancestors had lived since time immemorial. It ordered that Armenian men be murdered, and the Armenian women, children, and grandparents be deported into areas of Syria declared unfit for human life. Most of the Armenians who managed to survive the death march were slaughtered there. In *The Sins of the Fathers*—the first part in *The Betrayal of Philosophy* trilogy—Dr. Siobhan Nash-Marshall connects the total disregard of fact and people, of lands and history that informed the Armenian Genocide and Turkish denial to what is today informing our world and culture.

Siobhan Nash-Marshall holds the Mary T. Clark Chair of Christian Philosophy at Manhattanville College. Author of many academic books and articles on metaphysics and the problem of evil, she also has written books and articles for the general public—*Joan of Arc: A Spiritual Biography* and *What It Takes to be Free: Religion and the Roots of Democracy*. In recent years, Nash-Marshall has devoted a lot of attention to genocide and genocide negationism. *The Sins of the Fathers* is her first book-length treatment of the topic. After the breakout of the war in Syria, Nash-Marshall and some friends founded the Christians In Need Foundation (CINF), through which they attempt to help the ancient Christian cultures of the world which are presently in peril.

**For information about the event please contact (747) 500-7585 or**  
**Eskijian@Ararat-eskijian-museum.com**

### Հրանդ Տինք Հիմնարկի Կազմակերպած «Զմիւռնիա եւ Շրջակայքը» Գիտաժողովը կը Կայանայ Զմիւռնիոյ Մէջ



Հրանդ Տինք Հիմնարկի կազմակերպած «Զմիւռնիա եւ շրջակայքը՝ հասարակական, մշակութային եւ տնտեսական փոփոխութեան հարիւր տարին, 1850-1950» երկօրեայ միջազգային գիտաժողովը կայացաւ 24-25 Նոյեմբերին, Զմիւռնիոյ (Իզմիր) Ահմետ Ատնան Սայկուն արուեստի կեդրոնին մէջ:

Գիտաժողովի բացման խօսքը արտասանեց Այհան Աքթար: Լուսանկարներու ընկերակցութեամբ, Աքթար կը ներկայացնէ 19րդ դարու վերջաւորութեան մինչեւ այսօր երկարող փոփոխութիւնը եւ շեշտը կը դնէ Զմիւռնիոյ բազմամշակոյթ կայսերական քաղաքէն դէպի ազգ-պետութիւն անցումին եւ ապա մշակութապէս եւ տնտեսապէս ինքնամփոփ դառնալուն վրայ: Էլչին Մաճար կը ներկայացնէ բացման զեկոյցը: Մաճար կը մեկնաբանէ 2015ին մահացած Վանկելիս Քելիբիթիի Զմիւռնիոյ պատմութեան նուիրուած գիտական աշխատանքը, ինչպէս նաեւ կ'արժեւորէ այս նիւթին շուրջ Քելիբիթիի նորարական մօտեցումներուն բերած ներդրումները:

«Մեծ փոփոխութեան նախօրեակի Զմիւռնիան» խորագրով առաջին նիստի ընթացքին զեկոյցներ կ'ընթերցուին՝ Այսրն Նահանգի 1913-1917 թուականներու միջեւ նահանգապետ Մուսթաֆա Ռահմի Պէյի եւ 19րդ դարու կէսին սկսեալ Զմիւռնիոյ մէջ Սկովտիական միսիոնարներու Հրեաներու ուղղեալ աշխատանքին մասին: Յաջորդ նիստին նիւթն էր կայսրութեան հանրապետական շրջան անցումի ընթացքի շրջանին մէջ կայացան հասարակական-տնտեսական փոփոխութիւնը եւ փլուզումը: Զեկուցաբերներէն էլլինոր Մորաք, կեդրոնանալով 1922-1925 թուականներուն վրայ, կ'ընդգծէ թէ «ազգային տնտեսութիւն» քաղաքականութեան ներքոյ տնտեսութեան թրջացումը ոչ թէ հարստութիւն բերած է, այլ պատճառ դարձած է աղքատութեան:

19րդ դարու վերջաւորութեան եւ 20րդ դարու սկիզբին Զմիւռնի-

իոյ հասարակական կեանքը նիւթ առնող երրորդ նիստի ընթացքին կ'արծարծուին Յոյն Ուղղափառ համայնքի մարզական գործունէութեան եւ Յոյն ազգային գաղափարախօսութեան միջեւ առնչութիւնը, Զմիւռնիոյ յոյներու հանրամատչելի երաժշտութեան մէջ «Էսթրուտիանթիան» աւանդույթը եւ Զմիւռնահայ համայնքի պաշտօնական տօնախմբութիւններու մասնակցութեան ընդմէջէն «օսմանականացում» գաղափարի տարածման խնդիրը: Յաջորդ նիստի ընթացքին կ'արծարծուի բազմամշակոյթ Զմիւռնիոյ 20րդ դարու փոփոխութիւնները եւ միջազգային դպրոցները: Զեկուցաբերներէն Անդրէաս Պուրութիս կը համեմատէ ոչ-Իսլամ եւ Իսլամ բնակչութեան միջեւ տարբերութիւնները 20րդ դարու սկիզբի Արեւմտեան տեսակի կրթութեան մէջ, մատնանշելով որ Իսլամ աշակերտուհիները դուրս մնացած են իր ուսումնասիրութեան: Գիտաժողովի առաջին օրը վերջ կը գտնէ Զաքարիա Միլտանօղլուի Զմիւռնիոյ հայ պարբերական մամուլը ներկայացնող յատուկ նիստով: Միլտանօղլու իր զեկոյցը կը սկսի ներկայացնելով 1672 թուականին Զմիւռնիոյ մէջ տպագրուած առաջին գիրքով եւ պատկերներու ցուցադրութեամբ կը քննարկէ 1840-1922 թուականներու միջեւ Զմիւռնիոյ մէջ լոյս տեսած 37 պարբերականները:

Գիտաժողովի երկրորդ օրը եւս մեծ թիւով ունկնդիրներ կը ներկայանան: Օրուան առաջին, «Հրդեհ եւ Ցնցում» վերնագիրով նիստին, 1922 թուականի Զմիւռնիոյ Հրդեհին հաւաքական յիշողութեան մէջտեղը եւ անոր հասարակական-հոգեբանական ազդեցութիւնը կը քննարկուի: Այս նիստի ընթացքին կը քննարկուին հրդեհի տեսողական նիւթերու գործածութեան երեկը եւ այսօրը, հրդեհի ընթացքին հաւաքական անձնապանութեան դէպքերը, ինչպէս նաեւ Զինադադարի տարիներուն Յոյն

Շար.ը էջ 19

### «Արաս»-էն Նոր Գիրք՝ «Սպասման Սրահին Մէջ»


«Սպասման սրահին մէջ» Զապէլ Եսայեանի առաջին վէպն է, որ թերթօնի ձեւով տպագրուած է «Ծաղիկ»-ի մէջ, Սեպտեմբեր 1903-էն սկսեալ:

Արեւմտահայ արձակի կարեւոր դէմքերէն մէկն է Զապէլ Եսայեան, որ իր հանրային գործունէութեամբ ալ ուրոյն տեղ մը կը գրաւէ Ի. դարասկիզբի հայ իրականութեան մէջ: «Սպասման սրահին մէջ» գրագիտուհի տիկնոջ առաջին վէպն է, որ թերթօնի ձեւով տպագրուած է «Ծաղիկ»-ի մէջ, սեպտեմբեր 1903-էն սկսեալ: Փարիզեան կեանքէն առնուած դրուագ մը կը ներկայացնէ գիրքը, ուր երիտասարդ սակայն աղքատ մայր մը՝ էվա, իր վտիտ ստինքներէն բնութեան զլացած կաթը կը փորձէ ապահովել մայրանոցի միջանցքներուն մէջ՝ վկան դառնալով հիւանդանոցի պաշտօնեաներուն անխիղճ վերաբերմունքին: Մէկ կողմէ ալ իր հիւանդ ամուսինը կը խնամէ էվա, որ զգայուն կնոջ յատուկ վերապահութեամբ կ'ընդունի հոգիին խորը, քիչ մըն ալ անգիտակցաբար ծագող սէրը հանդէպ գինք խնամող բժիշկին: «Սպասման սրահին մէջ»-ի այս առաջին հրատարակութեան յառաջաբանը գրի առած է գրագէտ Գրիգոր Պըլտեան:

#### ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ



Բուն անունով Զապէլ Յովհաննէսեան, ծնած է 1878-ին Սկիւ-



տար: Նախակրթութիւնը ստացած է ծննդավայրի Ս. Խաչ վարժարանին մէջ: Տասնեօթ տարեկանին գացած է Փարիզ եւ հետեւած Սորպոնի գրականութեան դասընթացքին: Հոն ամուսնացած է նկարիչ Տիգրան Եսայեանի հետ: Գրական իր նախափորձերը կատարած է Արշակ Զօպանեանի «Ծաղիկ» եւ «Անահիտ» թերթերուն մէջ: Փրկուած է Մեծ Եղեռնէն, փախչելով Պուլկարիա եւ անկէ անցնելով Կովկաս, ուր տարած է հանրային եւ ազգային կեանքը շահագրգռող աշխատանք: 1920-էն ետք անցած է Եւրոպա: Ազգային գործունէութեան առընթեր զբաղած է նաեւ գաղթականներու եւ որբերու տեղաւորման հարցերով: 1927-ին կ'այցելէ Խորհրդային Հայաստան եւ Փարիզ վերադարձին կը հրատարակէ «Պրոմէթէոս ազատագրուած» հատորը:

1933-ին կը տեղափոխուի Երեւան եւ հոն կը շարունակէ իր գրական գործունէութիւնը: Կը պաշտօնավարէ պետական համալսարանի մէջ, որպէս դասախօս, աւանդելով արեւմտեան երկիրներու գրականութեան պատմութիւն: 1937-ին կը դառնայ Սթանիսլեան բռնութիւններու զոհ. կ'աքսորուի: Հետագային կը յայտարարուի, որ մահացած է 1943-ին

Եթէ կը փնտռէք եզակի գիրք մը ...  
Անգուզական՝ գլուխգործոց, հազուագիտ, լուսանկարչական ալպոմ մը,  
350 էջոց, 1000 գունաւոր լուսանկարներով եւ լաթակազմ ...

**ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲԵՐԷՔ ԶԵՐ ՏՈՒՆ**

**ԶԱՅՆԵՐ ԼՈՌԻԹԵԱՆ ՄԷՋ**  
Հեղինակ՝ դոկտոր Կարպիս Տէր-Տէրիայեան

Սուրբ Ծնունդի եւ Նոր Տարուայ լուսազոյն նուէրը:  
Շրջագայեցէք գիրքի էջերով դէպի Ատանա, Ձեյրուն, Մարաշ, Խարբերդ, Միս, Այնթապ, Հաճըն, Տիգրանակերտ, Մուսա Լեռ... եւ այլն:

Անմիջապէս հեռաձայնեցէք եւ պատուիրեցէք Ձեր մեկ կամ մեկէ աւելի օրինակները - Հեռ: **(818) 246.2070**

NATIONAL NOTARY ASSOCIATION  
NOTARY PUBLIC

**Garine Depoyan**

626-755-4773  
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106  
ghdepyan@gmail.com

### ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՓԱՌԱՊԱՆԾ 130-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄԸ

Շարունակուած էջ 6-էն



պահելու շրջանի հրդեհներէն:

Նոր Սերունդ Մշակութային Միութեան «Արեգ» պարախումբի տղաներն ու աղջիկները ներկայացուցին Հնչակեան կուսակցութեան հիմնադրութեան 130-ամեակին նուիրուած պար մը: Ապա բեմ բարձրացաւ ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան անդամ, պատմական գիտութիւններու դոկտոր ընկ. Նարեկ Գալստեան: Ան զաղափարական եւ մարտական հսկայ ընտանիք մը համարեց Հնչակեան կուսակցութիւնը եւ պատրաստակամութիւն յայտնեց նուիրուելու հայրենիք Հայաստանին: Դիտել տալով, որ Հնչակեան կուսակցութիւնը շատ աւելի հին է քան նոյնիսկ ատրպէյճանցի ազգը, ընկ. Գալստեան հաստատեց, որ կուսակցութիւնը նաեւ երիտասարդ եւ ապագայի քաղաքական ուժ է: Անոր համաձայն, միակ եւ այլընտրանք չունեցող կողմնորոշումը այսօր պէտք է ըլլայ Հայաստանի Հանրապետութիւնը, հակառակ իր բոլոր խնդիրներուն եւ անարդարութեանց: «Այսօր Հայաստանի Հանրապետութիւնը կանգնած է վճռական փոփոխութիւններու առջեւ եւ երկրի հզօրութեան կարեւորագոյն առանցքներէն մէկն է նաեւ հայկական Սփիւռքը», ըսաւ ընկ. Գալստեան: Անոր խօսքով, այսօրուան առաջ նահերթ խնդիրը պէտք է ըլլայ Արցախին նեցուկ կանգնելը եւ անոր անկախութեան ճանաչումը պարտադրելը:

Ընկ. Գալստեան կուսակցութեան պատրաստակամութիւնը յայտնեց իր մարտական եւ կազմակերպչական ուժերը տրամադրելու Արցախին, կոչ ուղղելով ըլլալու կազմակերպուած եւ միաբան, մեր կամքը պարտադրելու համար Ատրպէյճանին: Ան հակիրճ կերպով անդրադարձաւ Հայաստանի մէջ Հնչակեան կուսակցութեան գործունէութեան եւ արձանագրած նորագոյն յաջողութիւններուն:

«Արարատ» օրաթերթի տնօրէնուհի ընկ.հի Անի Եփրեմեան ապրումով ասմունքեց հայրենաշունչ բանաստեղծութիւն մը:

Հայրենի երգիչ Յարութ Մուրատեան ապա մեկնաբանեց «Ախպերս ու Ես», «Տուն իմ Հայրենի» եւ «Հայոց Բանակ» երգերը:

ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան անդամ ընկ. Ալեքսան Քէօշկէրեան իր խօսքին մէջ նշում կատարեց Հնչակեան կուսակցութեան տարածումի ընդարձակ աշխարհագրութեան, որ կը հասնի ամէն տեղ, ուր հայու բաբախող սիրտ կայ: Անոր համաձայն, ազգային եւ ընկերային պայքարներով լեցուն այս կուսակցութիւնը հաւատարիմ կը մնայ համամարդկային սկզբունքներուն, նաեւ կը շարունակէ գործել իր մօտաւոր եւ հեռավոր նպատակներուն ուղղութեամբ: Ընկ. Քէօշկէրեան կոչ ուղղեց ամրապնդելու Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութիւնը եւ դարբաղեան հարցը լուծելու խաղաղ ու արդար հանգուցարուծմամբ: Դիտել տալով, որ

### ՀԱԼԵՊԻ ՄԷՋ ՄԵԾ ՇՈՒՔՈՎ ՆՇՈՒԵՑԱԻ Ս.Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 130-ԱՄԵԱԿԸ

Շարունակուած էջ 6-էն



աւարտին հաստատուած է այն միտքը, որ կուսակցութիւնը միշտ հաւատացած է հայազգի միասնականութեան եւ Հայաստանի ամբողջականութեան ու յանուն այդ զաղափարի իրագործման՝ մշտապէս թիկունք կանգնած է Հայաստանին:

Ձեռնարկներուն մաս կազմած են նաեւ ՀՄՄԻ փողերախումբն ու սկաուտութիւնը: Մօտ մէկուկէս ժամոց զեղարւեստական յայտագրէն վերջ պարահանդէս տեղի ունեցած է «Քուրթուպա» ճաշարանէն ներս: Հալէպահայ երգիչ Յակոբ Այնթէպլեան յեղափոխական եւ ազգային երգերով ճոխացուցած է մթնոլորտը:

Հնչակեան կուսակցութիւնը միշտ կանգնած է արդար իրաւունքներ ունեցող ժողովուրդներու կողքին, ընկ. Ալեքսան Քէօշկէրեան նշեց, որ Հնչակեան կուսակցութիւնը Յեղասպանութեան ճանաչման առնչութեամբ ճիշդ եւ արդիւնաւէտ համարած է աշխատիլ Թուրքիոյ ներքին հրապարակին վրայ, յառաջադէմ կազմակերպութիւններու եւ անհատներու հետ: Անոր համաձայն, այս աշխատանքը արդարացուած է եւ տուած շօշափելի արդիւնքներ, շեղում մտցնելով Թուրքիոյ մէկ հատուածի հասարակական մտածողութեան մէջ:

«Թուրքիոյ մէջէն Հայոց Յեղասպանութեան ճանաչումը ընդունողներ գտնելը հաւասար եւ աւելի արդիւնաւէտ աշխատանք է քան այլեւայլ խորհրդարաններու մէջ գանոնք որոնելը», ըսաւ ընկ. Քէօշկէրեան:

Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Շահէ Էպս. Փանոսեան իր եզրափակիչ խօսքին մէջ ողջունեց Հնչակեան կուսակցութիւնները ծնած են ժողովուրդի կարիքներէն, ծառայելու համար ժողովուրդին: Ան կոչ ուղղեց հայկական կազմակերպութիւններուն աշխուժացնելու իրենց աշխատանքը, համաշխարհայնացման դժուար պայմաններուն մէջ:

Աւարտին, հայրենի երգիչ Յարութ Մուրատեան կատարեց «Հնչակեան ենք Մենք» երգը, իսկ Մուրատեան, Յովիկ Թաֆրանեան եւ ներկաները միասնաբար երգեցին «Ուխտի Հրաւէր»ը:

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք  
«Մասիս» Շաբաթաթերթին**  
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

**INNOVATIVE**  
Designs  **Manufacturing, Inc.**



idmifurnishings.com





### 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ ՆՈՅԵՄԲԵՐ 29-ԻՆ ԲԱՅՈՒԵՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՐԵՐԻ ԶՈՒՇԱՅԱՍԱԼԻՐԸ

Շարունակուած էջ 13-էն

Թեք մոյթերն աւարտող գլխադիրներն եւ առանց երկարածիգ յուշապատի: Յուշարձանի անաւարտ հատուածներն շինարարական աշխատանքները շարունակուեցին մինչեւ 1968 թուականի աշուն: Այդ ընթացքում կեանքի կոչուեց 110 գծամետր երկարութեամբ յուշապատը, աւարտուեցին յարակից տարածքի բարեկարգման եւ հետիոտն ճեմուղիների պատրաստման աշխատանքները: Նախապէս որոշուած էր յուշապատը քանդակապատել: Էսքիզային մշակումը յանձնարարուել էր նկարիչ մոնումենտալիստ Վանիկ Խաչատրեանին: Նա ներկայացրեց որմանքանդակի միասնական գանգուած ներկայացնող դրուագային ու տարամասշտաբ կերպարների համադրման իր տեսլականը: Համադրելով այն յուշարձանի գույն ու լակունիկ կերպարի հետ, ճարտարապետները չհամաձայնուեցին այդ առաջարկութեան հետ: «Հայպետնախձագիծ» ինստիտուտում վերջնական քննարկման ժամանակ Լեւոն Ներսիսեանն առաջարկեց յուշապատը թողնել ասկետիկ մերկութեամբ, քանի որ որմանքանդակը գաղափարապէս աւելորդութիւն է:

Յուշահամալիրը ունի տեխնիկական եւ ծառայողական շինութիւններ, որոնք չեն խաթարում շինութեան ընդհանուր տեսքը:

Յուշարձանի շինարարութիւնը, յիշուելի, ունեցաւ համազգային նշանակութիւն: Շատ հայրեր, դիմեր, ցանկանալով անմասն չմնալ, հանրապետութեան տարբեր գիւղերից ու քաղաքներից աւտոբուսներով շաբաթ, կիրակի օրերին գալիս էին շինարարակ եւ իրենց անհատուց օգնութիւնն առաջարկում շինարարներին:

Ի սկզբանէ, յուշարձանի բացման պաշտօնական արարողութիւնը ծրագրուած էր 1967թ. Ապրիլի 24-ին, սակայն տեղափոխուեց Հայաստանի խորհրդայնացման օրը՝ Նոյեմբերի 29-ին: Բացումը, որին ներկայ էին հանրապետութեան բարձրաստիճան պաշտօնեաներ, մտաւորականներ, հեռարձակուեց հանրապետական ռադիոյով եւ հեռուստատեսութեամբ:

1968թ. յուշարձանը ներկայացուեց երիտասարդ ճարտարապետների համամիութենական ամենամեայ ստուգատեսին եւարժանացաւ առաջին կարգի դիպլոմի:

#### ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐ

Արթուր Թարխանեան (1932-2006) - ՀԽՍՀ վաստակաւոր (1972), ՀԽՍՀ ժողովրդական ճարտարապետ (1987): Պարգևատրուել է Անանիա Շիրակացու մետալով (1998): Եղել է ՀԽՍՀ Գերագոյն Խորհրդի պատգամաւոր (1980-1989): Դասաւանդել է Երեւանի ճարտարապետութեան եւ շինարարութեան համալսարանում (պրոֆեսոր՝ 1993 թուականից): Նա աւելի քան 20 յուշարձանների ճարտարապետն է, որոնցից են.

• Մեծ եղեռնի զոհերի յուշ-



ճարտարապետ Արթուր Թարխանեան

համալիր (Երեւան, 1967)

• Մարտիրոս Սարեանի յուշարձան (Երեւան, 1986)

• Խորհրդային Հայաստանի 50-ամեակի յուշարձան (Դիլիջան, 1970)

• Շառլ Ազնաւուրի արձան (Գիւմրի, 2001)

Համահեղինակների հետ նրա նախագծով կառուցուել են.

• ՀՀ ԳԱԱ հասարակական գիտութիւնների ինստիտուտների մասնաշէնքերը (1955-1972)

• «Ռոսիա» կինոթատրոնը (1970-1974, ԽՍՀՄ Նախարարների խորհրդի մրցանակ, 1979)

• Երիտասարդութեան պալատը (1970-1985, ՀամԼԿԵՄ մրցանակ, 1981)

• «Զուարթնոց» օդանավակայանը (1981, ՀԽՍՀ Պետական մրցանակ՝ 1985)

• Մարզահամերգային համալիրը (1984, ԽՍՀՄ Պետական մրցանակ՝ 1987)

Սաշուր Քալաշեան (1936)-

ՀԽՍՀ վաստակաւոր ճարտարապետ (1987): 1976-1994 թուականներին եղել է Գիւմրիի գլխաւոր ճարտարապետը: 1995-2000 թուականներին՝ Հայնախագիծ ինստիտուտի գլխաւոր ճարտարապետ, 2000 թուականից՝ փոխտնօրէն:

Քալաշեանի համահեղինակութեամբ կառուցուել են.

• Մեծ եղեռնի զոհերի յուշահամալիրը (Երեւան, 1967)

• Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտը (Երեւան, 1995)

• «Կոմայրի» պետական պատմաճարտարապետական արգելոց-թանգարանը, (Լենինական, այժմ՝ Գիւմրի, 1980, ՀԽՍՀ պետական մրցանակ՝ 1985)

2011-2015 թթ. տեղի ունեցան



ճարտարապետ Սաշուր Քալաշեան

Հայոց ցեղասպանութեան յուշահամալիրի հիմնանորոգման աշխատանքները, բարեկարգուեցին Մի-ծեռնակաբերդի ճեմուղին եւ յարակից տարածքը:

1991 թ. Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հռչակումից յետոյ տարբեր երկրներից ժամանած պաշտօնական պատուիրակութիւնների այցը Հայոց ցեղասպանութեան յուշահամալիրը դառնում է աւանդույթ, իսկ արդէն 2002 թ. Մարտի 16-ից՝ ՀՀ պետական արարողակարգի ծառայութեան մասին օրէնքով «Պետական արարողակարգի ծառայութիւն» գործակալութիւնը ստանձնում է այցելութիւնների կարգաւորման պարտաւորութիւնը: Հայոց ցեղասպանութեան յուշահամալիր այցելութիւնը դառնում է պետական արարողակարգի անքակտելի մաս՝ հիմնուած կողմերի փոխհամաձայնութեան վրայ:

ՀՀ պետական արարողակարգը ենթադրում է, որ պաշտօնական այցով Երեւան ժամանած պատուիրակութիւնները յարգանքի տուրք են մատուցում Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին՝ ծաղիկներ կամ ծաղկեպսակ են դնում յուշահամալիրում, շրջում են թանգարանում, ծառ տնկում:

Հայոց ցեղասպանութեան յուշահամալիր են այցելել Հայաստանի Հանրապետութիւն ժամանած հազարաւոր պաշտօնական պատուիրակութիւններ՝ տարբեր երկրների նախագահներ, հոգեւոր առաջնորդներ, աշխարհի տարբեր պետութիւնների խորհրդարանների նախագահներ, խօսնակներ, պատգամաւորներ, կառավարութեան անդամներ, միջազգային կազմակերպութիւնների անդամներ, գիտնականներ, համաշխարհային հեղինակութիւն ունեցող մշակութային գործիչներ:

Նիւթը կազմեցին՝ Գոհար Նանումեանը եւ Արեւիկ Աւետիսեանը

#### ՑԱՒԱՑԱԿԱՆ

Հանգուցեալ ՍԻՐՈՒՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ մահուան տխուր առթիւ Տէր եւ Տիկ. Կարօ Պէքարեան իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տիար Արմէն Մարտիրոսեանին եւ Տէր եւ Տիկ. Մարտիկ եւ Հեղինէ Մուրատեաններուն:  
Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

#### Ստացանք

### Voice in Silence/Ձայներ Լռութեան մէջ Զեղինակ Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեան

Մաշտոց Գոյէճի այս տարուան հրատարակութիւնն եղող սոյն գիրք ալպոմն իր մէջ կը պարունակէ բազմահարիւր գերատիպ եւ գունաւոր լուսանկարներ որոնք առնուած են Ատան, Չէյթուն, Վան, Մարաշ, Խարբերդ, Սիս, Այնթէպ, Հաճըն եւ այլ վայրեր կատարուած ուղեւորութիւններու ընթացքին: Անգլերէն լեզուով գրուած սոյն հատորը կը բաղկանայ շուրջ 400 էջերէ եւ շտեմարան մըն է պատմական լուսանկարներու: Այլ խօսքով կենդանի վկան է մեր դարաւոր յուշարձաններուն, վանքերուն եւ ճարտարապետական հոյակապ կոթողներուն: Գիրքին մէջ կան նաեւ տեղեկատուական համապատասխան բացատրութիւններ իւրաքանչիւր վայրին մասին: Գնահատելի աշխատանք մը արդարեւ:

## ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)

## ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ԸՆՈԱՉԱՅՆԵԼ (626) 797-7680

*Handel's Messiah*  
a Christmas Outreach Sing-A-Long  
Sunday, December 17, 2017  
at 7:00pm

United Armenian Congregational Church  
3480 Cahuenga Blvd. West  
Los Angeles, CA 90068

For more informations please call the Church Office at (323) 851-5265

Free for all! Open to the Community!

### ԳԻԻՄՐԻԻ ԴՈՄԻԿՈՒՄ ԱՊՐՈՂ 33-ՐԴ ԸՆՏԱՆԻՔԸ ՏՈՒՆ ՍՏԱՅԱԲ



Դոմիկոմ ապրող Մնխչեանները ընտանիքը նոր բնակարան ստացավ: Տունը, որում անհոգ ու երջանիկ ապրում էին մինչև երկրաշարժը, Մանուչեան փողոցի վրայ էր: Տունը, որում մոռացել էին՝ ինչպիսին են տարրական կենցաղային պայմանները, նոյն Մանուչեան փողոցի վրայ էր:

12 տարի Մնխչեանների ընտանիքը ապրել է տնակում՝ առանց կոմունալ հարմարությունների, բաց յոյսով: Ընտանիքում 6 հոգի են. տատիկն ու պապիկը՝ Շահանդուխտ եւ Արմենակ Մնխչեանները, կինն ու ամուսինը՝ Պարուլըն ու Ռուզաննան, եւ նրանց երեխաները՝ Զուլիեանն ու Արմենակը: Ամուսինն աշխատում է շինարարության խանութում, ընդամենը 50,000 հազար դրամ աշխատավարձով: Կինը չունի մշտական

աշխատանք: Յաւելեալ եկամտի միակ աղբիւրը երեխաների նպաստ է՝ 25.900 դրամ: Նոր կեանքի բանալին Մնխչեանները ստանում են «Հայաստան» համահայկական հիմնադրամից: «Հայաստան» համահայկական Հիմնադրամը, Ամերիկայում գործող «Հայաստան հիմնադրամ» կազմակերպության բարեր ժան Մարի Ատամիանի աջակցութեամբ, ընտանիքին անակնկալ էր պատրաստել՝ սեփական բնակարան Մուշ թաղամասում:

Մնխչեանների ընտանիքը 33-րդ ընտանիքն է Գիւմրիում, որ դոմիկից տուն է տեղափոխուել «Հայաստան» համահայկական հիմնադրամի աջակցութեամբ: Հիմնադրամը Գիւմրիի տնակներում ապրող ընտանիքներին բնակարաններով է ապահովում 2014-ից:

### Հրանդ Տինք Հիմնարկի Կազմակերպած

Շարունակուած էջ 15-էն

եւ Հայ համայնքներու միջեւ բարեկամական յարաբերութիւնները: Յաջորդ նիստին, Զմիւռնիոյ անցուդարձը տնտեսական դիտանկիւնէ կը քննարկուի ժամանակաշրջան ունենալով 19րդ դարու վերջին քառորդէն սկսեալ մինչև Հրդեհը եւ անոր անմիջապէս յաջորդող շրջանը: Զեկուցաբերներէն Ումիթ Քուրթ կը մատնանշէ Հրդեհէն ետք պետութեան միջամտութեան, ոչ-իսլամներու գոյքի կողոպուտին դէմ, «լքուած գոյք» օրէնքով պաշտօնական գրաւումին: Թալաթ Ուլուսոյ կ'ըսէ թէ խօսքը ոչ թէ «լքուած գոյքի» մասին է, այլ քաղաքէն բռնի սեռացուած յոյներուն եւ հայերուն պատկանող գոյքին: Գիտաժողովի եօթներորդ եւ

վերջին նիստին կը քննարկուին 1930ականներուն Զմիւռնիոյ մէջ տեղի ունեցած փոքրամասնութիւններու դէմ ազգայնական քարոզարշաւները, Զմիւռնիոյ յոյներուն հետ Յունաստանի մէջ կայացած հարցազրոյցներու հիման վրայ շրջանի մշակոյթի մէջ հասարակական սեռացումութեան դերերը եւ ինքնութիւնները, ինչպէս նաեւ երեք Զմիւռնիոյ յոյներու յուշերը:

Գիտաժողովը կը հասնի իր աւարտին Այհան Աքթարի ընդհանուր եզրակացութիւններու տեղ տրուած փակման խօսքով: Ամբողջ երկու օր տեւած զեկոյցները «Զմիւռնիոյ վերելքը եւ անկումը» խորագրին տակ հաւաքելէ ետք, Աքթարի ինչէ թէ թրքացումի քաղաքականութիւններու շրջանակին մէջ 20րդ դարու ընթացքին անընդհատ շարունակ-

### ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԶՈՅԳ ԳՐՔԵՐ

Շարունակուած էջ 14-էն

Խուղան, Թեմրազ, Մինաս, Ասատուր եւ Անդրանիկ Դիւլանչեաններին, Պետրոս եւ Զանի Ղարիբեաններին, Աթանէս, Գասպար եւ Մայիս Զաքարեաններին այս գրքի աշխատանքում իրեն օգնելու համար: Հեղինակը տասնչորս առանձին գլուխներով ներկայացնում է Դիւլանչեանների արդարեւ բազմանդամ գերդաստանի տոհմածառը, բազմաբովանդակ տեղեկութիւններով՝ ծնունդ, գործ, ամուսնութիւն, զաւակների քանակ, շառաւիղներ, խնամութիւն, բնութագրեր, ուսում, ունեցուածք, արտերի, անասունների քանակ, գոմերի եւ տների տարածքների քարտէզներ, լուսանկարներ, կտակներ, մահ եւ այլն: Գիրքը ընդգրկում է 240 էջ պատկերներով եւ քարտէսներով:

Նրա «Խօսք ու գրոյց» գլխի ներքոյ ներկայացուած են հարցազրոյցներ, հեքիաթներ, պատմուածքներ, առակներ, բառացանկ, վերջաբանի փոխարէն եւ յաւելում: «Վերջաբանի փոխարէն» վերնագրի տակ հեղինակը խոր ցաւով է գրում հայութեան անցեալի պատմութեան առնչող՝ «Երբ ուսումնասիրում ենք հայ ժողովրդի պատմութիւնը, հոգեպէս վրդովւում ենք, որ հայոց աշխարհը դարեր շարունակ պատերազմի թատերաբեմ է եղել՝ կոտորածներ եւ ջարդեր...աւերուել եւ հայաթափ են եղել մեր շէն ոստանները, նրա զաւակները ցրուել են աշխարհով մէկ՝ սկիզբ դնելով բազում հայկական գաղթօճախներին...»:

Ինչպէս վերեւում նշուած է՝ երկրորդ գիրքը՝ «Փերիոյ հայոց ազգագրութիւնից» աշխատասիրութեան առաջին գիրքն է 299 էջերով (պատկերների եւ քարտէզների հետ, ինչը հոյակապ նկարներ փերիոյ գիւղական կեանքից պատկանում են կերպարուեստագէտ՝ Սմբատ տէր Կիւրեղեանի վրձինին): Գիրքը ներառում է գաւառի հողագործութեան առնչող կանոնակարգի, հողատարածքի, գործիքների, հասարակական մարդկային նյութերի, վարք ու բարքի, նիստ ու կացի, մշակութային սովորութիւնների, կուսակցութիւնների եւ մէկ առ մէկ գիւղերի կեանքի մասին տեղեկութիւններ:

Գրքի յառաջաբանում խմբագիր Աննա Չոքեքչեանը ներկայացնում է հեղինակի բնութագիրը՝ կենսագրութիւնը: Ներկայացնէ մէկ հատուածը՝ «Նա ծնուել է 1923 թ. Փերիոյ Ղարղուն գիւղում, մանուկ հասկում կորցնում է մօրը, հօր գուրգուրանքի ներքոյ է մեծանում (Դիւլանչին հօր մասին գրել է՝ «Նա ինձ համար թէ հայր եղաւ, թէ՛ մայր»), գիւղական դպրոց է աւարտում: Նա ուշիմ եւ հետաքրքրասէր խառնուածքով իր գիտելիքները զարգացնում է ինքնաշխատութեամբ: Նա ամուսնանալով ինչը զաւակ է ունենում՝ չորս տղոց, հինգ դուստր: Նա 1969ին ընտանիքով հայրենադարձում է, ապրում, աշխատում, աշխատասիրում է այդ գրքերը եւ

մահկանացուն կնքում է 2016-ին, 93 տարեկան հասկում, էջմիածնում»: Նա չմտածեց արտագաղթելու մասին, նա հայրենասէր էր ու ազգասէր, տարած ու կատարած աշխատանքը վկան է իր մտածելակերպի: Հեղինակի առաջաբան գրութեան մէջ ասուած է՝ «Աշխատել եմ ընտրել այնպիսի տեղեկութիւններ, որոնք երբեք գրի չեն առնուած...գրածիս ու թսուին տոկոսից աւելին հիմնուած է իմացածիս, տեսածիս եւ լսածիս վրայ: Աշխատանքիս նպատակն է՝ գրառել եւ պահպանել Փերիա գաւառի հայութեան 370 տարիների պատմութեան վեաբերող նիւթեր»:

Հեղինակը Փերիա գաւառը նկատի է առել երեք գլխաւոր մասերի՝ Վերին Փերիա, Միջին Փերիա եւ Ներքին Փերիա, ընդհանուր 25 գիւղեր, որոնց տարածքներում գտնուող գիւղերի մասին բովանդակալից եւ մանրակրկիտ տուեալներով տեղեկութիւններ է ներկայացրել քարտէզների վրայ նշումներով:

«Աշխատութիւններ» գլխի ներքոյ Դիւլանչին ի մի է հաւաքել բոլոր գրողների այն գործերը՝ պատմական, գեղարուեստական, յիշատակումներ եւ այլն, որոնք անդրադարձել են փերիահայութեան պատմութեան թուով 44 գրքեր, տետրակներ, թերթեր, յօդուածներ եւ տարատեսակ գրութիւններ: Նշենք մի քանիսի անունները ի մասնաւորի՝ Առաքել Դաւրիժեցու՝ «Պատմութիւն հայոց», Լեւոն Մինասեանի՝ «Պատմութիւն Փերիահայերի 1606-1956» եւ ուրիշներ:

Այսու գրութեամբ մեր գնահատանքի եւ ուրախութեան խօսքն ենք յայտնում այս կարեւոր գրքերի հրատարակութեան համար, որոնց լոյս ընծայման մէջ իրենց դերակատարութիւնն են ունեցել Հերոս Դիւլանչեանը եւ Աննա Չոքեքչեանը, թող որ ողորմած հոգի Դիւլանչու հոգին խաղաղութեան մէջ հանգչի, որ իր երկար տարիների տքնաշան աշխատանքը հանրութեան է ներկայացուել որպէս անմեռ յիշատակ իր իմաստալից կեանքի:

Կը յուսամ այս սեղմ ու ամփոփ յօդուածով արդարացրած լինեմ իմ ջանքերը, քանզի հնարաւոր չէ գրքերի բովանդակութեան լայն ներկայացում կարճ ու սահմանափակ գրախօսականով, ուստի հետաքրքրողները թող գրքերը ձեռք բերեն բովանդակ տեղեկութիւններ ստանալու Դիւլանչեանների սերունդների եւ Փերիոյ գիւղերի մասին:

Յօդուածս աւարտում եմ ողորմած հոգի Դիւլանչու այս պարբերութեամբ՝ «Իմ աշխատութիւններս ինչքանով են յաջողուել, դու պիտի դատես սիրելի ընթերցող, բաց հաւատացնում եմ, որ այս պահին, երբ հասնում եմ վերջին վերջակէտիս, սիրտս մի քիչ թեթեւացած է ու խիղճս հանգիստ, ինչպէս ամէն լաւ ու բարի գործ արած մարդու մօտ է լինում: Ուրեմն թոյլ տուէք ասելիքս վերջացնեմ մեր պապերի իմաստուն խօսքով»:

Անմեղադիր լերուք, կար իմ այս էջ»:

ուած կողոպուտը եւ բռնագրաւումը «տեղական եւ ազգային» վերնախաւ մը ստեղծելու նպատակին չէ հասած:

Գիտաժողովի տեսանկյունները յառաջիկայ օրերուն պիտի տեղադրուին [www.hrantdink.org](http://www.hrantdink.org) կայքէջին վրայ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱԱ-2018-ի խմբերի փճակահանութեան Արդիւնքները

FINAL DRAW			
DRAW RESULTS			
<b>GROUP A</b> RUSSIA SAUDI ARABIA EGYPT URUGUAY	<b>GROUP B</b> PORTUGAL SPAIN MOROCCO IR IRAN	<b>GROUP C</b> FRANCE AUSTRALIA PERU DENMARK	<b>GROUP D</b> ARGENTINA ICELAND CROATIA NIGERIA
<b>GROUP E</b> BRAZIL SWITZERLAND COSTA RICA SERBIA	<b>GROUP F</b> GERMANY MEXICO SWEDEN KOREA REPUBLIC	<b>GROUP G</b> BELGIUM PANAMA TUNISIA ENGLAND	<b>GROUP H</b> POLAND SENEGAL COLOMBIA JAPAN

Մոսկուայի Կրեմլի պալատում տեղի ունեցաւ 2018թ. աշխարհի առաջնութեան եզրափակիչ մրցաշարի խմբային փուլի վիճակահանութիւնը: Յունիսի 14-ին Մոսկուայի «Լուժնիկի» ստադիոնում կայանալիք բացման խաղում Ռուսաստանի հաւաքականը կը խաղայ Սաուդեան Արաբիայի թիմի հետ:

- A խումբ. Ռուսաստան, Սաուդյան Արաբիա, Եգիպտոս, Ուրուգուայ:
- B խումբ. Պորտուգալիա, Սպանիա, Մարոկկո, Իրան:
- C խումբ. Ֆրանսա, Աւստրալիա, Պերու, Դանիա:
- D խումբ. Արժենտինա, Իսլանդիա, Խորվաթիա, Նիգերիա:
- E խումբ. Բրազիլիա, Շուեյցարիա, Կոստա Ռիկա, Սերբիա:
- F խումբ. Գերմանիա, Մեքսիքո, Շուեդիա, Հարաւային Գորեա:
- G խումբ. Բելգիա, Պանամա, Թունիսի, Անգլիա:
- H խումբ. Լեհաստան, Սենեգալ, Կոլումբիա, Ճափոնիա:

Աշխարհի առաջնութիւնը կ'անցկացուի Յունիսի 14-ից Յուլիսի 15-ը Ռուսաստանի 11 քաղաքներում՝ Մոսկուայում, Սանկտ Պետերբուրգում, Սոչիում, Կազանում, Նիժնի Նովոքորոզում, Սարանսկում, Սամարայում, Դոնի Ռոստովում, Վոլգոգրադում, Կալինինգրադում եւ Եկատերինբուրգում:

«Մանչեսթեր Սիթին» Կրկնեց Պրեմիեր Լիգայի Յաղթական Շարքի Ռեկորդը

«Մանչեսթեր Սիթին», Պրեմիեր լիգայի 15-րդ տուրում 2:1 հաշուով յաղթելով Լոնդոնի «Վեստ Հեմին», կրկնել է Անգլիայի առաջնութեան յաղթական շարքի ռեկորդը, որը պատկանում է 4 թիմերի:

Դա իրենց Գուարդիոլայի գլխավորած թիմի 13-րդ անընդմէջ յաղթանակն էր Պրեմիեր լիգայում: Նախկինում Անգլիայի առաջնութիւնում ալգլիսի յաղթական շարք ունեցել էին միայն «Պրեստոնը» եւ «Սանդերլենդը» (1891/92 մրցաշրջանում), «Արսենալը» (2001/02) եւ «Չելսին» (2016/17), յայտնում է GracenoteLive-ը:

Եթէ «Մանչեսթեր Սիթին» յաջորդ խաղում հաղթի «Մանչեսթեր Եունայթեդին», կը սահմանի բաձարձակ ռեկորդը:

Յիշեցնենք, որ 15-րդ տուրից յետոյ Խոսեպ Գուարդիոլայի թիմը 8 միաւոր գերազանցում է երկրորդ տեղում գտնուող «Մանչեսթեր Եունայթեդին»:

«Արսենալ» - «Մանչեսթեր Եունայթեդ»՝ 1-3

Անգլիայի առաջնութեան 15-րդ տուրի կեդրոնական խաղում «Մանչեսթեր Եունայթեդը» Լոնտոնում խաղաց «Արսենալի» հետ եւ առաւելութեան հասաւ 3:1 հաշուով:



Արդէն մեկնարկում հիւրերը օգտուեցին «Արսենալի» պաշտպանութեան անկազմակերպ խաղից եւ էկուադորցի կիսապաշտպան Լուիս Անտոնիո Վալենսիայի ու անգլիացի կիսապաշտպան Ջեսի Լինգարդի գոլերի շնորհիւ 12 րոպէսում զգալի առաւելութիւն ստացան՝ 2:0:

Ընդմիջումից յետոյ ֆրանսիացի Արսէն Վենգերի գլխավորած թիմը ֆրանսացի յարձակուող Ալեքսանդր Լիակազեթի գոլի շնորհիւ կրճատեց տարբերութիւնը, սակայն Լինգարդը նաեւ իր երկրորդ գոլը խփեց եւ պորտուգալացի ժոզէ Մուրիլյոյի ղեկավարած թիմի համար ապահովեց հանգիստ վերջնամաս, թէեւ 74-րդ րոպէին «Մանչեսթեր Եունայթեդի» ֆրանսիացի կիսապաշտպան Պոլ Պոզբան կոպիտ խաղաց էկստր Բելլերինի դեմ եւ հեռացուեց: Մանչեսթերեան թիմը կարողացաւ մնացած ժամանակում յստակ պաշտպանուել եւ հանդիպումն ավարտել յաղթանակով:

«Բարսելոնան» Միաւորներ Կորցրեց Տանը

Սպանիայի առաջնութեան 14-րդ տուրում «Բարսելոնան» ընդունեց Վիգոյի «Սելտային» եւ բաւարարուեց 1 միաւորով: Կատալոնական թիմի կազմում աչքի ընկան արգենտինացի Լիոնել Մեսին ու ուրուգուայցի

Անպարտելի Արսէն Գուլամիրեանի Զերթական Յաղթանակը՝ Նոկաուտով



Առաջին ծանր քաշային կարգում հանդէս եկող Արսէն Գուլամիրեանը հերթական յաղթանակն է տարել պրոֆեսիոնալ ռինգում: Յրանապայտ կայացած մենամարտում 30-ամեայ բռնցքամարտիկը նոկաուտի է ենթարկել բրազիլացի Հեմիլթոն Վենտուրային: Պրոֆեսիոնալ ռինգում 22 մենամարտ անցկացրած Արսէն Գուլամիրեանը շարունակում է անպարտելի մնալ: 22 յաղթանակները 14-ում նա առաիելութեան է հասել նոկաուտով:

Դորամոնդի «Բորուսիան» Զետեւում է Զերիխ Միթթարեանի Շուրջ Ստեղծուած Իրավիճակին

Դորամոնդի «Բորուսիան» հետեւում է «Մանչեսթեր Եունայթեդի» կիսապաշտպան Հենրիխ Միթթարեանի շուրջ ստեղծուած իրավիճակին:

Express.co.uk-ի համաձայն՝ գերմանական ակումբը դէմ չէ վերադարձնել Հայաստանի հաւաքականի աւագին, որը յայտարարուել է «Մանչեսթեր Եունայթեդի» վերջին 5 խաղերից միայն մէկին՝ դուրս գալով փոխարինման:

Վերջերս «Մանչեսթեր Եունայթեդի» գլխաւոր մարզիչ ժոզէ Մուրիլյոն յայտնել էր, որ դժգոհ է Միթթարեանի ելույթից վերջին 4-5 խաղերում: Դրանից յետոյ 28-ամեայ կիսապաշտպանը սկսել էր լրացուցիչ մարզումներ անցկացնել մարզասրահում, որպէսզի վերադարձնի տեղն անգլիական ակումբի մեկնարկային կազմում:

Նշուում է, որ է «Մանչեսթեր Եունայթեդը» կը փորձի վաճառել Հենրիխ Միթթարեանին, եթէ յաջողուի ձեռք բերել Լոնտոնի «Արսենալի» կիսապաշտպան Մետոթ Օզիլին: Գերմանիայի ազգային հաւաքականի 29-ամեայ ֆուտպոլիստի գործող պայմանագիրն ավարտուում է այս մրցաշրջանի վերջում:

Յիշեցնենք, որ Հենրիխ Միթթարեանը Դորամոնդի «Բորուսիան» հանդէս եկել է 2013-2016 թվականներին:

Եւրա Մովսիսեանին Զրաւիրում Են Եւրոպա, Արաս Օզբիլիսին՝ Ռուսաստան

Ֆուտպոլային գործակալ Տիգրան Մկրտիչեանը հաստատել է, որ ղազախական ակումբները հետաքրքրուած են ամերիկեան «Ռեալ Սոլթ Լէյքքի» յարձակուող եւրա Մովսիսեանի եւ թուրքական «Բեշիկթաշի» կիսապաշտպան Արաս Օզբիլիսի ծառայութիւններով:



Մովսիսեանի ու Օզբիլիսի տեղափոխութիւններով զբաղուող գործակալի խօսքով՝ Ղազախաստանից ստացուած առաջարկներն առաջնային չեն հայ ֆուտպոլիստների համար:

«Իրականում, այդ հարցով բանակցութիւններ ընթանում են, սակայն կան շատ մանրուքներ: Օրինակ՝ 2 ֆուտպոլիստների աշխատավարձի հարցը: Եթէ եւրա Մովսիսեանի պայմանագիրը «Ռեալ Սոլթ Լէյքքի» հետ ավարտուում է, ապա Արաս Օզբիլիսը մնում է «Բեշիկթաշի» խաղացող: Նրանց՝ Ղազախաստան տեղափոխուելու հաւանականութիւնն իրական է, սակայն դա առաջնային տարբերակ չէ ֆուտպոլիստների համար: Պէտք է հասկանալ, որ եւրոպայում Արասն ունեն կարիերան շարունակելու եւս մի քանի տարբերակներ: Մովսիսեանին հրաւիրում են Եւրոպա, իսկ Օզբիլիսին՝ Ռուսաստան: Դեռ պարզ չէ, թէ ինչպէս ամէն բան կը դասաւորուի:

Լուիս Սուարեսը, սակայն պահել յաղթական հաշիւը էոնեստո Վալվերդեի գլխավորած թիմին չյաջողուեց՝ 2:2:

«Բարսելոնան» 36 միաւորով շարունակում է գլխավորել մրցաշարային աղիւսակը: «Սելտան» 18 միաւորով 8-րդ տեղում է: